

Հայկական Յեղասպանութեան 87ամեակին առիթով, «Ազդակ» լույս պիտի չտեսնէ վաղը՝ Հինգշաբթի, 25 Ապրիլին:

Մեր յաջորդ թիւը Ուրբաթ՝ 26 Ապրիլ 2002ին:

ՌԱՍՄԱԼԼԱ, 23 (ՌՈՅԹԸՐԶ).- Ծանր պայթույններ տեղի ունեցած են երկվ գիշեր Եսաէր Արաքսի Ռամալայի պաշարուած կեդրոնատեղիին գրասենեակներուն մէջ, սակայն Արաքսի անվնաս դուրս եկած է: Իսրայէլեան բանակին համաձայն՝ պայթումները ձեռնադրութեան հետեանք են, մինչ պաղեստինեան ապահովութեան ուժերու պատասխանատու Մոհամէտ Տահյան կ'ըսէ, թէ Իսրայէլի ակնուած ուժերը պայթեցուցած է գրասենեակներէն միայն հինգ մէքր հեռու գտնուող դատարկ բանտի մը մէջ, որուն թիրախն էր, սակայն, Արաքսը:

ԿՈՉ

87ամեակն է Հայկական Յեղասպանութեան:

Հայրերինը, Հայաստանի թէ Արտերկրի մէջ, անգամ մը եւս կը խոնարհի իր մէկուկէն միլիոն նահատակներու յիշատակին առջեւ, կը վերանորոգէ իր պայքարի կամքն ու վճռակամութիւնը եւ հայրութեան ու Հայաստանի սպառնացող նոր դժուարութիւններուն ու վտանգներուն դիմաց կու գայ շարունակելու իր երթը՝ համահայկական ուժերու ամբողջական յարումով:

Լիբանանահայութիւնը, այս տարի եւս, իր քաղաքական եւ յարանուանական բոլոր շերտերով պիտի ոգեկոչէ Հայկական Յեղասպանութիւնը, արտայայտէ իր միահամուռ կեցուածքը եւ յանձնառութեան ամենաբարձր գիտակցութեամբ տէր պիտի կանգնի իր առաքելութեան:

ՌԱՄՎԱԿԱՐ ԱԶՍԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆ ՍՈՅՅԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԸՆԴՈՎԵԸՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՅԵՂՎՓՈՒՍԿԱՆ ԴԱՇԵՆԱԿՅՈՒԹԻՒՆ

ԿՈՉ

ԼԻԲԱՆԱՆԻ ԸԱՅՈՒԹԵԱՆ

Չորեքշաբթի, 24 Ապրիլին, Հայ ժողովուրդը ի Հայաստան եւ ի Սփիւռն աշխարհի նոյն հաւատարմութեամբ անգամ մը եւս, յատուկ հանդիսարարութեամբ պիտի նշէ Հայկական Յեղասպանութեան առաւել քան մէկուկէն միլիոն անմեղ պահուած յիշատակը: Այս առիթով, նոյն օրը Լիբանանի թեմի բոլոր եկեղեցիներէն ներս պիտի մատուցուի Սուրբ Եւսեբիոսի պատարագ: Այդ օր, Սուրբ պատարագի արարողութիւնը պիտի անարտի սովորականէն կանուխ, ժամը 10:30ին:

ՇՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Նոյն օրը, Արքեպիսկոպոս Մայրավանքին մէջ, պիտի կատարուի հոգեհանգստեան պաշտօնական արարողութիւն Ապրիլեան Նահատակաց մատարան առջեւ:

Արարողութեան պիտի նախագահէ եւ հայրական պատգամը պիտի տայ՝

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՅՆ

Հարկ է որ իրաքանչիւր հայ անհատ յատուկ նախաձեռնողութեամբ ու գիտակից հաւատքով ներկայ գտնուի Մայրավանք, մասնակցելու հոգեհանգստեան պաշտօնական արարողութեան եւ յետոյ վեհափառ հայրապետին պատգամը:

Հետեւաբար, կոչ կ'ուղղենք, որ Չորեքշաբթի, 24 Ապրիլին, Լիբանանի բոլոր շրջաններուն մէջ փակ ման հայկական բոլոր խանութները, գրասենեակները եւ աշխատանոցները, դպրոցները տեսակի գործ եւ մեր ժողովուրդին բոլոր պատկերները ներկայ ըլլան եկեղեցական արարողութեանց ու ժողովրդային հանդիսութիւններուն՝ հաղորդուելու ու պօրանալու համար մեր նահատակներու ամուր հաւատքով ու նուիրական կտակով:

Պէտք է մեր շրջապատին ու ամբողջ աշխարհին ցոյց տայ, որ Հայ ժողովուրդը ո՛ր որ ալ ըլլայ չի՛ մոռնար իր նահատակները, չի՛ մոռնար իր իրաւունքները եւ միասնական կեցուածքով միշտ կը մնայ պահանջատէր:

ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ ԱՐԱՋՆՈՐԴ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ

ԼԻԲԱՆԱՆԱԸԱՅՈՒԹԻՒՆԸ ՄԵԾ ՇՈՒՔՈՎ ՈԳԵԿՈՉԵՑ ԸԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 87ԱՄԵԱԿԸ

Այսօր Հայաստանի թէ Սփիւռքի տարածքին հայութիւնը կը խոնարհի Հայկական Յեղասպանութեան 1,5 միլիոն նահատակներուն յիշատակին առջեւ՝ անգամ մը եւս վերանորոգելով Հայկական Պահանջատիրութեան իր ուխտը: Այս յանձնառութեամբ է, որ երէկ, 23 Ապրիլի երեկոյեան ժամը 9:00ին, հայ քաղաքական երեք կուսակցութիւններուն կազմակերպած ոգեկոչման հանդիսութեամբ, հոծ թիւով լիբանանահայեր խմբուեցան Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի Նահատակաց մատարան շուրջ՝ յիշատակելու Հայկական Յեղասպանութեան 87ամեակը:

Հանդիսութեան նախորդեց հոգեհանգստեան արարողութիւն, որուն ընթացքին Կիլիկիոյ կաթողիկոս արանի Դպրեվանքի երգչախումբը մեկնաբանեց հոգեհանգստեան շարականներ: Ապա, Հ.Մ.Մ.ի շեփորախումբին նուագակցութեամբ հայ քաղաքական երեք կուսակցութիւններուն ներկայացուցիչները եղեռնի մատարան առջեւ վետեղեցին ծաղկեպսակ մը, որմէ ետք Հ.Մ.Մ.ի շեփորախումբը նուագեց Լիբանանի եւ Հայաստանի քայլերգները: Ներկաները մէկ վայրկեան յոտնկայ լռութեամբ յարգեցին յիշատակը Հայկական Յեղասպանութեան 1,5 միլիոն նահատակներուն:

Բացման իսօքը կատարեց Հրաչ Սեփեթեան, որ արժեւորելէ ետք վերջին ժամանակաշրջանին Հայկական Յեղասպանութեան ճանաչման առնչութեամբ կատարուած իրագործումները, ըսաւ. «Այսօր մենք՝ լիբանանահայեր, պիտի արեւելի յստակ, իրատես եւ համակարգուած կերպով, որպէսզի Լիբանանի կողքին արաբական այլ պետութիւններ եւս ճանչնան Հայկական Յեղասպանութիւնը»: Ան կոչ ուղղեց հայկական կազմակերպութիւններուն, պետական գործիչներուն եւ իրաւագէտներուն՝ մեծ թափով յառաջ տանելու մեր ազգային նպատակներուն իրա-



(Լուսանկարները՝ Պ. ԶԱՐՈՒԿԵԱՆԻ)

գործումը:

Ապա յաջորդաբար խօսք առին ՌԱԿԻ, Ս. Դ. Հ. Կ. Ի եւ Հ. Յ. Դ. Ի ներկայացուցիչները:

ՌԱԿԻ ներկայացուցիչ տղաք. Պօղոս Աստուրեան շեշտելէ ետք մեր ազգային իրաւունքներու հետապնդման աշխատանքին մէջ համահայկական միասնականութեան անհրաժեշտութիւնը, ըսաւ. «Անհրաժեշտ է, որ կարելի բոլոր ձեւերով մեզուկ կանգնինք հայրենիքի վերելքին եւ արցախեան ձեռքբերումներուն պահ-

անունով խօսք առնելով, Կիրակոս Թիւթիւնեան վերահաստատեց Յեղասպանութեան ուրացման անհրաժեշտութիւնը պատճելու գիտակցութեան արմատաւորման անհրաժեշտութիւնը եւ վերանորոգեց «միասնական ու անտեղիտալի քայլերով, հանգրուան առ հանգրուան մեր պահանջատիրական համագաղթի պայքարը շարունակելու» ուխտը: Ան նշեց, որ Հայկական Պահանջատիրութիւնը ներկայիս կը դիմագրաւէ նոր մարտահրաւերներ: «Համաշխարհայինացումի նորագոյն ընթացումը, արեւմտեան բարբերու լայն ներթափանցումը, տեղայնամտութիւնը, բարոյական արժեքներու նահանջը ի հաշիւ նիւթական արժեքներուն, մեծապէս կը խաթարեն նոր սերունդին հայեցի նկարագիրը, այն սերունդին, որ տասնամեակ մը ետք պիտի ըլլայ Հայ Դատի հետապնդման դրօշակակիրը, ըսաւ ան: Կ. Թիւթիւնեան շեշտեց, որ Հայկական Պահանջատիրութիւնը կամ Հայ Դատի հետապնդման հասկացողութիւնը կ'անցնին Հայաստանի Հանրապետութեան հզօրացման եւ արցախեան յաղթանակին քաղաքականապէս ամրագրման ընդմէջէն: Ան նաեւ դատապարտեց Թուրքիոյ հին դաշնակիցին՝ Իսրայէլի կողմէ պաղեստինցի ժողովուրդին հանդէպ գործած վայրագութիւնները. «Ժողովուրդ մը կը քարոզուի իր պայտեակներու հողերուն վրայ, մինչ աշխարհը կը մնայ անպօր դիտորդի դերին մէջ, իսկ իր արարած ուրիշութեամբ հպարտացող Միացեալ Նահանգներու վարչակարգը բացառապէս կը ներկայանայ իբրեւ շարդա-

րարին մեղսակից», ըսաւ ան:

Հ. Յ. Դաշնակցութեան անունով խօսք առաւ Յովիկ Պերթիպլեան, որ ըսաւ. «Անցեալ 87 տարիները եւ պատահածին ահաւորութիւնը չեն ընկրկեցուցած հայ ժողովուրդը, որ դարձանելէ ետք իր վերելքը իր բոլոր միջոցներով վերջնականապէս թափելով այս յանձնարարութիւնը, աւելցուցան



Հայ քաղաքական երեք կուսակցութեանց ներկայացուցիչները ծաղկեպսակ կը գետնէն:

պայքարի ելած է իր հզօր թշնամիին դէմ, որպէսզի պարտադրէ անոր ընդունելու իր գործած ոճիրը եւ թոյլ տայ, որ ան թուրքը վերջնականապէս տիրանայ հայուն պատմական հայրենիքին»: Ապա ան նշեց Հայկական Յեղասպանութեան ճանաչման ճանաչման վրայ վերջին տարիներուն ընթացքին հայութեան արձանագրած յաջողութիւնները, զորս Թուրքիա այլեւս չի կրնար անտեսելու թեւեւ անհաւատելու ընթացքին: Խօսելով Թուրքիոյ ուրացման ճիգերուն մասին, Հ. Պերթիպլեան ըսաւ. «Տակաւին վերջերս Թուրքիոյ նախագահ Ահմէթ Նեճմէթ Սեւէր դարձեալ կը յայտարարէր, որ թրքական իշխանութիւնները որոշած են թրքական պետական արխիւները բացառապէս ակադեմիականութեամբ առջեւ՝ ջրեղու համար Հայկական Յեղասպանութեան մասին հայկական պիտուները»: Եթէ իսկապէս թրքական պետական արխիւնե-

ւն շեշտեց. «Հայկական Յեղասպանութեան 87րդ տարեկիցի այս օրերուն, Թուրքիոյ աշխարհի գերութեան հասցեագրած մեր պատգամը մէկ է ու շատ յստակ. եթէ կ'ուզենք կայունութիւն ու խաղաղութիւն, պահպանուած իրաւունքները պիտի խաթարեն քաղաքացիները պէտք է ունենանք ճշմարտութիւնները դիմագրաւելու եւ ընդունելու: Այլապէս պայքարը երկար է, ու հայ ժողովուրդը պատրաստ է ամէն պոռոտութեան»: Դպրեվանքի երգչախումբին կողմէ «Ով որ քաջ է», «Խոնժան սակէր», «Հիմի՛ էլ յոնէք» ազգային երգերու մեկնաբանութեան ետք խօսք առաւ Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեան, որ հաստատեց, թէ Հայկական Յեղասպանութեան միջազգային ճանաչման հետապնդումը կը շարունակէ մնայ Հայաստանի Հանրապետու-



Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս՝ պատգամի պահում:

պանման: Այս բողոքին առնչութեամբ, ժամանակն է, որ Սփիւռքը համախմբուի ինքնիր մէջ՝ միաժամանակ համախմբուելով հայրենիքին շուրջ: Խօսելով լիբանանահայ գաղութի իրավիճակին մասին, ան ըսաւ, որ լիբանանահայութիւնը կը կարօտի յատուկ եւ համատեղուած ճիգի՝ վերագրուելու համար իր երբեմնի ուժակաւորութիւնը: Իր խօսքը եզրափակելով, տղաք. Պ. Աստուրեան մաղթեց, որ մեր ազգային աշխատանքները ընթացան միասնական ոգով՝ համելու համար յաջողութեան:

Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան

ՏՐԱՊԱՐԱԿԻ ԿՐԱՅ Է ԱՊՐԻԼ 24Ի ՆՈՒԻՐՈՒՄԸ «ԱԶԳԱԿ»Ի ԲԱՅԱՌԻԿԸ ԱԶԳԱԿ 24 ԱՊՐԻԼ 2002 87ամեակ

### ԴԵՍՊԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ «ԱԶԴԱԿ»-Ի ԽՍՐԱԳՐԱՏՈՒՆ

Երէկ, 23 Ապրիլ 2002ին, Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ և լիազօր դեսպան Արեգ Յովհաննիսեան այցելեց «Ազգակ» ի խմբագրատուն: Դեսպանը ծանօթացաւ «Ազգակ»-ի գործունէութեան, բաժանմունքներուն եւ խմբագրական աշխատանքներուն ու ծրագրերուն: Դեսպան Յովհաննիսեան ընդգծեց հայ մամուլի անհրաժեշտութիւնը եւ մաղթեց, որ «Ազգակ»ը անխափան կը շարունակէ իր առաքելութիւնը:

### ՄԵԾՆԻ ԵՐԵՄՓՈՒՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

### ԿԱՊՐԻԷԼ ՍԸՐ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ

Երեսփոխան Ալպէր Մուխայպէրի մահով թափուր մնացած Մեծնի յոյն ուղղափառներու երեսփոխանական աթոռին համար ընտրութիւններու նախապատրաստութեան ծիրէն ներս, «Մոն Լիպան» ռատիոկայանի սեփականատէր Կապրիէլ Սըր երէկ մամուլի ասուլիսի մը մէջ յայտարարեց իր թեկնածութիւնը: Ներկայ էին երեսփոխան Նեսիպ Լահուտ եւ նախկին նախագահ Ամին Ժմաճէլ:

### ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՄԱՍՈՒԼԸ ԱՅՍՕՐ Կ'ԱՆԴՐԱԴԱՌՆԱՅ ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ

Հ. Յ. Դ. «Տեղեկատու Գրասենեակը կը հաղորդէ, որ այսօր՝ 24 Ապրիլին, լիբանանեան մամուլը («Daily Star», «L'Orient Le Jour», «Մաֆիթ», «Տիար») յօդուածներով, հարցալրոյցներով եւ այլ ուսումնասիրութիւններով պիտի անդրադարձան Հայկական Յեղասպանութեան: Բանաւոր մամուլը եւս պիտի անդրադարձան 1915ի իրադարձութեանց: Պատկերասփիւռի հետեւեալ կայաններէն կարելի է հետեւիլ հարցալրոյցներուն. ժամը 10:30ին՝ NTVէն, ժամը 11:30ին՝ NBNէն, ժամը 21:30ին՝ MTVէն:

### «ԱԶԴԱԿ»-Ի ՖՈՆՏԻ ԸՇԴՈՒՄ

● Ժիրայր Եագուպեանի մահուան առթով, Տիկին Հռիփսիմէ Պայրազտարեան եւ զաւակու՞՞՞ 50,000 Լ.Ո.

### ՄԱՀԱԶԴ

Տիկին Շաքէ Գոնեալեան եւ զաւակները՝ Ռազմիկ եւ Ռուբինա Գոնեալեան եւ զաւակները՝ Վիգէն եւ Արի Տիկին Շուշիկ Արալանեան եւ զաւակները՝ Վարանդ, Էտի եւ Սինթիա Տէր եւ տիկին Վաչէ եւ Հուրի Գոնեալեան եւ զաւակները՝ Սեւակ եւ Արմէն Տէր եւ տիկին Կարօ եւ Էլիզ Հիւսէնեան Տիկին Մարա Գոնեալեան եւ զաւակները եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբօր, մեծ հօր եւ հարազատին՝

### ՏՈՔԹ. ԵՂԻԿ ԳՈՆԵԱԼԵԱՆԻ (Ծնեալ՝ Տեօթեօլ, Կիլիկիա՝ 1919ին)

մահը, որ պատահեցաւ Երաթ, 20 Ապրիլ 2002ին, Լոս Անճելըսի մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան: Ազգային յուղարկւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Երաթ, 27 Ապրիլ, կէսօրէ առաջ ժամը 10:30ին, Օրէնճ Բառնթիի Մ. Բառասնից Մանկանց Եկեղեցւոյ մէջ, 5315 West McFadden Ave., Santa Ana, ապա հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Good Shepherd գերեզմանատուն, 8301 Talbert Ave., Huntington Beach: ● Ներկայս ընդունիլ իբրեւ մահազգ: ● Կը խնդրուի նուիրատուութիւնները կատարել Համագայիցի շինման գործին:

### ՄԱՀԱԶԴ

Օր. Համեստ, տեարք՝ Յակոբ եւ Վարդան Գուլաճեաններ Տէր եւ տիկին Պօղոս Գուլաճեան եւ դուստրը Տէր եւ տիկին Մանուկ Գուլաճեան եւ զաւակու՞՞՞ Տէր եւ տիկին Յարութ Գուլաճեան եւ զաւակու՞՞՞ Տէր եւ տիկին Արշակ Գուլաճեան եւ զաւակու՞՞՞ Տէր եւ տիկին Հրաչ Գուլաճեան եւ զաւակու՞՞՞ Տէր եւ տիկին Կարօ Գուլաճեան կը գուժեն իրենց մօր, մեծ մօր եւ հարազատին՝

### ՆՈՒՐԴ ԳՈՒԼԱՃԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երեւան, 23 Ապրիլ 2002ին, Լոս Անճելըսի մէջ: Թուղարկւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Լոս Անճելըսի մէջ: ● Ներկայս ընդունիլ իբրեւ մահազգ: ● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին զաւակին՝ Յարութ Գուլաճեանի բնակարանը, Ամանոս բաղ, «Սոֆեան» շէնք, 6րդ յարկ, Չորեքշաբթի 24, Հինգշաբթի 25, Ուրբաթ 26 եւ Շաբաթ 27 Ապրիլին:

## ԼԱՐՍԸՆ ՊԵՅՐՈՒԹԵՆ ՄԵԿՆԵՑԱԻ ԴԱՄԱՍԿՈՍ

ՄԱԿի ընդհանուր քարտուղարի Միջին Արեւելքի խաղաղութեան հարցերու յատուկ պատուիրակ թերի Ռոտ Լարսըն երէկ ելքափակեց Պէյրութ իր այցելութեան ծիրէն ներս լիբանանեան իշխանութեան պետներուն հետ իր ունեցած հանդիպումները, որոնք յատկացուած էին շրջանային վարչապետներուն, բայց մասնաւոր «Կապոյտ Գիծ»-ին իրավիճակին: Այս ծիրէն ներս նախանշեալ օր խորհրդարանի նախագահ Նեպիի Պրըրիի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի հետ տեսակցելէ ետք, երէկ, Դամասկոս մեկնելէ առաջ ան տեսակցութիւններ ունեցաւ նախագահ Կոր. Էմիլ Լահուտի եւ արտաքին գործոց նախարար Մահմուտ Համուտի հետ, եւ իրարմէ խաղաղութիւնը վարչապետ Հարիրիի հետ: Նախագահ Լահուտ

Լարսընի փոխանցեց Լիբանանի գոհունակութիւնը ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի այն որոշումին համար, որուն հիմամբ կապուեցաւ Այսրոյորդանի եւ մասնաւոր ժեներալ գաղթականներու ներս Երաթի գործած քարտուղար շուրջ հետաքննութեան եւ ճշմարտութեան քննարկման խմբակ մը: Նախագահ Լահուտ յայտնեց, որ Անանի հետ քննարկած է այս հարցը եւ ընդգծած է, որ Երաթի պատասխանատու պիտի ըլլայ խմբակի աշխատանքներու որեւէ խոչընդոտի կամ արգելիք: Ան նաեւ ընդգծեց, որ խմբակի անդամները լայն իրաւասութիւններ պէտք է ունենան, որպէսզի կարենան կատարել իրենց առաքելութիւնը, որովհետեւ խմբակի կազմութիւնը առաջին քայլն է, որուն պէտք է յարգուի ուրիշներ, մասնաւոր միջազգային ընտա-

նիքին կողմէ, այդ քարտուղար օրագրած, որոնք եւ գործած անձերը հաշտութեան կանչելու ուղղութեամբ: Հանդիպումին ընթացքին քննարկուեցան պաշտօնակցներու դէմ խրախուսելու վարչապետներու ու անոնց վերջ դնելու միջազգային ճիշդութիւնը: Լարսըն բարեւ, որ խօսած են Միջին Արեւելքի վտանգաւոր կացութեան, ինչպէս նաեւ Լիբանանի տնտեսական դժուար պայմաններուն մասին, հաստատելով, որ ապահովական եւ տնտեսական կացութեան, տնտեսական աճի եւ բարգաւաճումի միակ ուղին ընդհանուր եւ արդար խաղաղութեան հաստատումն է: Այս խաղաղութեան հաստատումին համար անհրաժեշտ է գործադրել ՄԱԿի թիւ 242, 338, 1397 եւ 1402 որոշումները, աւելցուց ան: Ծարը՝ էջ 3

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՄԵԼ. ԵՒ ՀԱՅԿ ԱՐՍԼԱՆԵԱՆ ԾԵՄԱՐԱՆԻՆ ՄԷՉ

Երեւան, 23 Ապրիլի առաւօտեան, Համազգայինի Մեկնաբերներու եւ Հայկ Արսլանեան ձեռնարանին մէջ կը տեւէր արտասովոր զգայուն մթնոլորտ մը: Ծեմարանի աշակերտութեան մեծ մասը հազած էր սեւ թիշերներ, նախապէս պատրաստուած Լարսեանական Միութեան կողմէ: Բակին կեդրոնը զետեղուած էր աշակերտներուն կողմէ պատրաստուած Միծեռնակաբերդի մանրակերտը, որուն կրակ կազմուած էր կարմիր, կապոյտ եւ նարնջագոյն մոմերէ: Հայրենասիրական եւ յեփփոխական երգերը կը սփռուէին զօտանքներուն ընթացքին եւ բոլորին մէջ կը բոցավառէր հայու վճիռ արիւնը: Փոքրերը՝ ազդուած, դադարեցան խաղերը եւ հաւաքուած էին Միծեռնակաբերդի կոթողին շուրջ: Դարձեցին մուտքին զետեղուած էին պահանջատիրութիւն խորհրդանշող նկարներ, Ապրիլ 24ի եւ Հայ Դատի վերաբերեալ գրութիւններ պատրաստուած միջնակարգի եօթներորդ դասարանի աշակերտներուն կողմէ: Վերջին երկու պահերուն ձեռնարկ մը տեղի ունեցաւ ձեռնարանի շրջափակին մէջ ներկայութեամբ միջնակարգի եւ երկրորդականի բաժինի աշակերտներուն, ուսուցիչներուն եւ պատասխանատուներուն: Լարսեանական Միութեան անունով խօսք առաւ աւարտական դասարանի աշակերտուհիներէն՝ Նանոր Ոսկերիչեան, որ հակիրճ կերպով անդրադարձաւ Մեծ Եղեռնին եւ անոր հետե-



ւանքներուն. ապա տեղի ունեցաւ զեղարուեստական յայտագիր: Վերջապէս՝ բեմ հրաւիրուեցաւ պր. Մկրտիչ Մկրտիչեան, որ փոխանցեց օրուան պատգամը: Ան իր խօսքին մէջ նշեց, որ յետ այսու Ապրիլ 24ը սպասուած մը չէ՛, այլ ուխտի վերանորոգման եւ պահանջատիրութեան եւ պահանջատիրութեան փուլերուն եւ թելադրեց աշակերտներուն, որ ամէնօրեայ ժրջան ու յարատեւ աշխատանքով պահանջները աշխարհէն ընդունիլ Հայկական Յեղասպանութիւնը: Բանաստեղծ ընդգծեց գիտութեան կարեւորութիւնը, ուր նշեց որ «Գիտութիւնը այս դարու զէնքն է»: Պր. Մկրտիչեան իր խօսքը փակեց ըսելով, թէ միացեալ ճիշդութիւնը պէտք է յարատեւ պայքար մղել հասնելու համար մեր նպատակին՝ հայ ժողովուրդի ամբողջական իրաւունքներու ձեռքբերումին:

### ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՅ ՈԳԵԿՈՉՈՒՄ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՉ

Չորեքշաբթի, 24 Ապրիլ 2002ին, Ամթիլիաի Ս. Գրիգոր Լուսաւորչի Մայր տաճարին մէջ պիտի ոգեկոչուի ամուսն յիշատակ Մեծ Եղեռնի մեկուկու միլիոն նահատակներուն:

### Պիտի պատարագ եւ քարոզ՝ ԳԵՐԸ. Տ. ԵՓՐԵՄ ԱՐԸ. ԹԱՊԱԳԵԱՆ

Պատարագն անմիջապէս տեղ, Նահատակաց Ս. Ստեփանոս Յուշարձան - Մատուռին առջեւ պիտի կատարուի հոգեհաճագոտեան արարողութիւնը: Այս առթիւ հայրապետական իր պատգամը պիտի փոխանցէ՝

### Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Սիրով կը հրաւիրուին մեր ժողովուրդի զաւակները՝ ներկայ գտնուելու եկեղեցական արարողութեան, լսելու վեհափառ հայրապետի պատգամը, եւ արժանի յարգանք ընծայելու մեր բերաւոր նահատակներուն ամեն յիշատակին: ԴԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

## ՏԵՍԱԿԵՑ ԹՈՒՐԲԻԱ՝ ԽԱՂԱԳՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՆՈՐԴ... (ԻՍՍԱՅԻԼ ԵՒՍԻ ԻՍՐԱՅԵԼ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ)

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Իսմայիլ ձէմ վաղը կը ժամանէ Միջին Արեւելք, տեսակցութիւններ ունենալու համար Երաթի վարչապետ Արիէլ Շարոնի եւ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսաէր Արաֆատի հետ, պաղեստինեան իսրայէլեան արհեստագիտական լուծում մը գտնելու առաջադրութեամբ:

Որեւէ առաքելութիւն, որ կը միտի իրապէս բարդ ու միանգամայն մտահոգիչ այս հարցին ուղղակի կամ անուղղակի միջնորդութեան, անկասկած ողջունելի է: Բայց երբ կարկինը լայն կը բանալը եւ ինչիւր կը քննարկենք ամբողջովին առարկայական ակնոցով, բնականաբար կը հարցնենք նաեւ, թէ ի վերջոյ ո՞վ է միջնորդը, ի՞նչ են անոր կարողութիւնները եւ կարելիութիւնները, միջազգային ընտանիքին մէջ անոր ապահոված դիրքն ու վայելած վարկը: Միջնորդութիւնը կը կատարեն կողմեր, որոնք կ'ամ գերուծ են (ինչ որ բնականաբար կը թույլատրէ, որ անոնց դիմաց բոլոր դռները բացուին), կ'ամ մեծ վարկ կը վայելեն իբրեւ անաչառ ու չէպոք, եւ հետեւաբար վստահութիւն կը ներշնչեն:

Արդ, Թուրքիա կը լրացնէ՞ միջնորդութեան այս պայմանները: Եկէ՛ք միասնաբար քննարկենք:

Բնականաբար Անգարա գերուծ մը չէ (թէեւ պիտուրապէս հյօր պետութիւն է), որպէսզի կարենայ յարգել իր նախաձեռնութեան մէջ, մասնաւոր որ այս պարագային գերուծ ըլլալը եւս տուեալ մը չէ կարծեք: Փաստօրէն, Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարը՝ Բոնի Փաուելը կամ Երոպական Միութեան ընթացիկ նստաշրջանի նախագահ Սպանիոյ արտաքին գործոց նախարարը՝ Ռոնէֆ Փիքէ չյաջողեցան կասեցնել պաղեստինեան շրջաններուն մէջ կատարուող իսրայէլեան սանձարձակ ու ապօրինի արշաւը: Ինչ կը վերաբերի երկրորդ տուեալին՝ անաչառութեան ու չէպոքութեան, ապա այս իմաստով Թուրքիա ուղղակի խոցելի է: Ան կը հանդիսանայ Երաթի զինուոր ու սերտ զաւակիցներէն մէկը, հետեւաբար կողմ է եւ հարցական է անոր միջամտութիւնը:

Կը մնայ վարկի հարցը: Ո՞ր վարկին մասին է, սակայն, խօսքը: Թուրքիա ի՞նչ պէ՞ս կը յաւակին տագնապներու լուծման միջնորդ ներկայանալու, երբ ինք անձամբ նմանօրինակ տագնապներ կը դիմագրաւէ, մեծ պարտքեր ունի հատուցելիք յոյներուն, քիւրտներուն, հայերուն: Անգարա եթէ համոզուած է, որ ունի խաղաղարար միջնորդի տուեալները, ապա թող այդ փորձին սկսի Հայկական Հարցի լուծումէն, վերադարձնէ իր բնագրաւուած Արեւմտահայաստանի հողերը, ընդունի իր գործադրած Հայկական Յեղասպանութիւնը, հատուցէ հայ ժողովուրդին բոլոր իրաւունքները ու այն ատեն միայն մտածէ այլոց մօտ միջամտութիւններ կատարելու մասին: Այլ խօսքով՝ թող ամէն մարդ նախ իր դրան առջեւ արէ...

### ԱՅՆՃԱՐ ԱՅՆՃԱՐ ԱՊՐԻԼԵԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՏՂԱՄԵԱԿ

### ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄ

Կազմակերպութեամբ Ը. Յ. Դ. ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԻՆ Կը բանախօսեն

### ՀԱՅՐ ԳԵՐՈՎ ՆՈՐԱՏՈՒԿԱՆ 2002-ԱՆ ՎՈՅՆԻ ԸՆՏԱՅԱՐԱՆԻ ՄԵՍՈՂ

Եւ ՏՈՔԹ. ՅՈՎԻԿ ԹԱՍԼԱԳԵԱՆ Գեղարուեստական յայտագիր՝ կատարողութեամբ գիլիոս 3 վարժարաններուն: Տեղի կ'ունենայ այսօր՝ Չորեքշաբթի, 24 Ապրիլ 2002, կէսօրէ առաջ ժամը 11:30ին, «Շտուրիկ» սրահին մէջ:

Չորեքշաբթի, 24 Ապրիլ, 2002, մեր բոլոր հաստատութիւնները փակ պիտի մնան եւ մեր խումբերան մերկայութեամբ պիտի յարգեն յիշատակը մեկուկու միլիոն նահատակներուն եւ վերանորոգեն մեր ուխտը:

### Ը. Յ. Դ. ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Advertisement for AFHIL insurance services. Text: "We Give Services. Not Just Policies." Includes contact information for AFHIL in Yerevan and Baku.

Advertisement for AFHIL insurance services. Text: "FOR THE SAKE OF OUR HEALTH AND YOURS DON'T SMOKE... FOR THE SAKE OF OUR NERVES AND YOURS KEEP SILENT... WATCH OUT! BABY ON BOARD... DRIVE SAFELY." Includes contact information for AFHIL in Yerevan and Baku.

# ԼՐ ՓԵՆ ՇԻՐԱՔԻ ԴԵՄՅԱՆԴԻՍԱՆ ԲԱՆԱՎԷՃ Կ'ԱՌԱՋԱՐԿԷ, ՄԻՆՉ ՇԻՐԱՔ ԿԸ ՄԵՐԺԷ

ՓՄԻԶ, 23 (ՌՈՅԹԸՐԸ).- Ծայրայեղ աշակերտական դեկլարացիան - Մարի Լը Փեն Երեքշաբթի օր առաջարկած է նախագահ Ժաք Շիրաքի հետ դեմ յանդիման պատկերասփռուած բանավէճ մը ունենալ, մինչ նախագահական ընտրութեանց առաջին հանգրուանին անոր արձանագրած յառաջխաղացքին դէմ բողոքները թափ կը ստանային Ֆրանսայի տարածքին:

Անոր առաջարկը Շիրաքի մօտիկ շրջանակներուն մէջ մեծ մտավախութեանց դուռ բացած է, այն գծով, թէ Լը Փեն կրնայ յարձակողական մը մը ձեռնարկել նախագահին դէմ, որ ամբաստանուած է պետական գումարներ ապօրինի կերպով գործածած ըլլալու յանցանքով:

Մինչ երկու կողմերը կը քննարկէին, թէ բանավէճը ի՞նչ պէս պէտք է տեղի ունենայ, դպրոցականներ Երեքշաբթի օր միացած են բողոքի ցոյցերուն, որոնք Կիրակի գիշերուէն ի վեր առօրեայ հերթականութեամբ կը կատարուին:

Աւելի ուշ, Շիրաք յայտարարեց, թէ չ'ընդառաջեր Լը Փենի առաջարկին, ըսելով, թէ «գործ չ'ունի անոր հետ»:

Կ'ակնկալուի, որ բողոքի ցոյցերը գազարակետին հասնին Մայիս 1ին, երբ Աշխատատեղական Օրոնան առիթով տեղի ունեցող աւանդական քայլարշաւներ կրնան Լը Փենի դէմ հակայ ցոյցերու վերածուիլ:

Լը Փեն կոչ ուղղած է իր Ազգային ձակատկուակցութեան հետեւորդներուն, որ նոյն օրը Փարիզի մէջ մեծ հաւաքի մը մասնակցին, ինչ որ չափապանց յարուած մթնոլորտի մը մէջ կրնայ խոռվութեանց դուռ բանալ:

Նորագոյն հարցախոյզներուն արդիւնքները ցոյց տուած են, թէ Մայիս 5ի ընտրութեանց երկրորդ հանգրուանին, քուէներուն 75 առ հարիւրը Շիրաքի պիտի երթայ, 13 առ հարիւրը՝ Լը Փենի:

Անցեալ Կիրակի օրուան ընտրութեանց առաջին հանգրուանին վերջնական արդիւնքները ցոյց տուած են, որ Շիրաքի քուէներուն 19,88 առ հարիւրը, Լը Փեն՝ 16,86 առ հարիւրը եւ վարչապետ Լիոնէլ ժոսփէն 16,18 առ հարիւրը ապահոված են: Բուէարկելու իրաւունք ունեցողներէն անսխալութեամբ անցած են մեծ համեմատութիւն կը՝ 28 առ հարիւրը ձեռնպահ մնացած է:

## ԼԱՐԱՆՆ ՊԵՅՐՈՒԹԵՆ ՍԵՎՆԵՑԱԻ... Ծարուակուած 2րդ էջէն

Լարսըն ըսաւ, որ նաեւ խօսած են «Կապոյտ Գիծ»ին մասին եւ ինք մտահոգութիւն յայտնած է հոն կատարուած այն խախտումներուն համար, զոր գործած են հարաւոր տնտեսական պայմաններուն մասին, որոնց բարելաւումին համար աշխատանք կը տանի ՄԱԿ:

Արտաքին գործոց նախարար Մահմուտ Համուտի հետ տեսակցելէ ետք, Լարսըն վերահաստատեց, որ «Կապոյտ Գիծ»ը նուիրական է եւ պոռնոցացուց, որ այդ գիծի որեւէ խախտում անդրադարձ պիտի ունենայ շրջանային կայունութեան վրայ:

Լարսըն նաեւ դրուատեց Պէյրութի մէջ գումարուած արարական վեհաժողովի որդեգրած խաղաղութեան սեղուական նախաձեռնութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՍՏԱՆԱՐԱՆԱԿԱՆ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ - ԵՇՈՍ ՂԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ «WHAT IS SPIRITUALITY» Պիտի դասախօսու՝ Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Տեղի կ'ունենայ Ծաբաթ, 27 Ապրիլ 2002, երեկոյեան ժամը 6:30ին, ԵՇՈՍի կեդրոնատեղիին մէջ, կաթողիկոսարան, Անթիլիաս:

## ՄԻՆՉ ԻՍՐԱՅԷԼ ՊԱՇԱՐՈՒԱԾ ԿԸ ՊԱՆԷ ԱՐԱՖԱԹԸ

# ԵՐՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ, ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԵՒՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ԿԸ ԴԻՄԵՆ ԽԱՂԱՂԱՐԱՐ ՄԻՋՆՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

Մինչ հրասայլեր երէկ կը շարունակէին պաշարման օդակի մէջ պահել պաղտութեան նախագահ Եասէր Արաֆաթի կեդրոնատեղին, կը թուէր, որ պայն մեկուսացնելու իսրայէլեան ճիգերը մաշումի ընթացքի մէջ կը գտնուէին, նկատի ունենալով Երոզպական Միութեան արտաքին քաղաքականութեան պատասխանատու Խալիէ Սոլայի եւ Յունաստանի ու Թուրքիոյ արտաքին գործոց նախարարներու այս շարքը:

Ե. Միութեան ներկայ նախագահ Սպանիա երէկ յայտնեց, թէ Խալիէ Սոլայի եւ Միութեան Միջին Արեւելքի պատուիրակ Միլիթի Մորաթինոս գիշերը կամ այսօր պիտի մեկնին Իսրայէլ եւ տեսակցութիւն պիտի ունենան նաեւ վարչապետ Արիէլ Շարոնի հետ:

## ԵՐՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ - ԱԼՃԵՐԻԱ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԻ ԿՆՔՈՒՄ

Երոզպական Միութիւնը Ալճերիոյ հետ կնքեց համագործակցութեան համաձայնութիւն մը, որ կը միտի առեւտուրի արգելքները արժատահան ընել եւ նոր կապեր հաստատել լուծելու համար շատ մը հարցեր, որոնցմէ՝ գլխաւորը՝ ահաբեկչութեան դէմ պայքարը:

Համաձայնութիւնը կնքուեցաւ Սպանիոյ վարչապետ Ժոզեպէ Մարիա Անարի եւ Ալճերիոյ նախագահ Ապտէլ-Ազիզ Պուլթիֆի միջեւ: Ներկայ էին Ե. Միութեան արտաքին գործերու յանձնակատար Բրիս Փեթըն եւ այլ նախարարներ: Որոշուեցաւ համա-

գործակցել ուսման եւ մշակոյթի բնագաւառներուն մէջ, ինչպէս նաեւ պայքարել սպանութիւններու, դրամ լուսալու, թմրեցուցիչի եւ ահաբեկչութեան դէմ:

«Երկիրներու մէջ բախում շատ մը հարցեր, որոնցմէ՝ գլխաւորը՝ ահաբեկչութեան դէմ պայքարը»:

Ե. Միութիւնը արդէն իսկ Միջերկրականի 12 երկիրներու հետ հաստատած է երկկողմանի առեւտրական համաձայնութիւններ:

## ՕԹԱՆԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՎԱՂԸ ԿԸ ՀԱՍՆԻ ԵՐԵՒԱՆ

Վաղը Երեւան պիտի հասնի Օթանէն պատուիրակութիւն մը, ՕԹԱՆԻ «Գործակցութիւն Յանուն Խաղաղութիւն» ծրագրի ծրագրի ներս համագործակցութեան համակարգումի կեդրոնի տնօրէն, գոր. Պոլիսլա Իզիտորչիքի գլխաւորութեամբ:

Այցելութեան նպատակն է Հայաստանի ղեկավարութեան հետ քննարկել ծրագրին Հայաստանի մասնակցութեան աշխուժացման միջոցները:

## Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆՆԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՈԳԵԿՈՉԵՑԻՆ ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԸ

Հայկական Յեղասպանութեան Յիշատակը Ոգեկոչելու համար, Հ. Յ. Դ. Լիբանանի պատանեկան միութիւնները ներկայացնող 45 պատանիներ իրենց վարիչ-վարչուիներով եւ Ընդհանուր վարիչ Մարմինի ներկայացուցիչ ընկերներով ուղղուեցան Պիքֆայա, ուր Մեծ Եղեռնի Նահատակաց յուշարձանին առջեւ մատուցեցին իրենց յարգանքի տուրքը:

Երեկոյեան ժամը 7:00ին Պիքֆայայի Նահատակաց յուշարձանին առջեւ մէկ վայրկեան յոտնկայս լուրսէնէ ետք, Հ. Յ. Դ. Լիբանանի պատանեկան միութիւններուն անունով տեղի ունեցաւ ծաղկապակի պետեղում:

Մեկուկէս միլիոն նահատակներու հոգիներուն համար արտասանուած «Հայր Մեր»էն ետք խօսք առաւ պատանի Նանոր Մահուտեան, որ վեր առաւ Ապրիլեան Նահատակներու յիշատակը եւ շեշտեց Հայ Դատի արդար լուծման համար պայքարելու հայութեան աննկուն կամքը եւ մաքառող ոգին:

Ծարը՝ էջ 9

## ՓՐՈՑ. ՆԻՔՈՂԱՅ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ՝ ՊԵՅՐՈՒԹԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Հայկական Յեղասպանութեան Յիշատակը Ոգեկոչելու համար, Հ. Յ. Դ. Լիբանանի պատանեկան միութիւնները ներկայացնող 45 պատանիներ իրենց վարիչ-վարչուիներով եւ Ընդհանուր վարիչ Մարմինի ներկայացուցիչ ընկերներով ուղղուեցան Պիքֆայա, ուր Մեծ Եղեռնի Նահատակաց յուշարձանին առջեւ մատուցեցին իրենց յարգանքի տուրքը:

Մեկուկէս միլիոն նահատակներու հոգիներուն համար արտասանուած «Հայր Մեր»էն ետք խօսք առաւ պատանի Նանոր Մահուտեան, որ վեր առաւ Ապրիլեան Նահատակներու յիշատակը եւ շեշտեց Հայ Դատի արդար լուծման համար պայքարելու հայութեան աննկուն կամքը եւ մաքառող ոգին:

Գիւսանագէտներու համաձայն՝ արտաքին գործոց նախարար Շիրաքի մոտ Փեթի յայտնած է, թէ նշեալ այցելութեան ընթացքին «թիրիմացութիւն մը» արձանագրուած է:

Ան ընդունած է նաեւ, որ Ե. Միութիւնը Ուաշինգթոնի կողքին դերակատարութիւն ունի՝ Միջին Արեւելքի մէջ անվերջանալի վայրագութեանց վերջ տալու մէջ, բանալով դուռ մը, որ շատ յաճախ խափանուած է կասկածներու պատճառով, թէ Երոզպապառվի կը կրնայ պաղտութեան դատին:

Շարոն երէկ յայտարարած է, թէ Իսրայէլ ահաբեկչութեան դէմ օրինական պատերազմ մը կը մղէ:

Երուսաղէմի մէջ արտասանուած խօսքի մը մէջ, որ ուղղակի ցուցադրուած է Ամերիկեան-իսրայէլեան Հանրային Հարցերու յանձնախումբին տարեկան խորհրդածոյովին, Շարոն ներկայացուցած է նաեւ երեք հանգրուաններէ բաղկացած խաղաղութեան ծրագիր մը, որ, ըսած է ան, կրնայ ընթացքի մէջ դրուիլ ամերիկեան հովանաւորութեամբ խաղաղութեան շրջանային խորհրդածոյովին:

Յայտարարելով, որ պաղտութիւնն է ան շրջաններուն մէջ իր արշաւը յաջողութիւն արձանագրած է, ինչ կը վերաբերի ահաբեկչութիւնը արմատախիլ ընելու հարցին, Շարոն ըսած է, թէ անիկա առիթ մը դուռ բացած է՝ խաղաղութեան գործընթացը դարձել ընթացքի մէջ դնելու:

## ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԵՒՈՅ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Միւս կողմէ, թուրք եւ յոյն պաշտօնատարներ երէկ յայտնեցին, թէ Յունաստանի եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարները՝ ձորձ Փափանտրէու եւ Իսմայիլ ձէմ, Իսրայէլի եւ պաղտութեան հողամասերուն մէջ խաղաղարար առաքելութեան մը պիտի ձեռնարկէին Վաղը, այն յոյսով, որ իրենց միջեւ յարաբերութեան բարելաւումը Միջին Արեւելքի մէջ խաղաղութիւն պիտի ներշնչէ:

Անոնք տեսակցութիւններ պիտի ունենան Արաֆաթի, Շարո-

ԼՕՄԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆԻ ՀԵՏ Կազմակերպութեամբ՝ Լ. Օ. ԽԱԶԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ Տեղի կ'ունենայ Հինգշաբթի, 25 Ապրիլ 2002, կէսօրը առաջ ժամը 10:00ին, ԼՕՄԻ «Արաքի Պուղորձեան» ընկերաբժշկական կեդրոնին մէջ: ԸՐԱԽԵՐ



# ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 87ԱՍԵԱԿ - ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 87ԱՍԵԱԿ - ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 87ԱՍԵԱԿ

# ԱՆՑԵԱԼԻ ՀԵՏՔԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Ալեքսանտրէթի եւ Լաւոնաքայի ծովեզերեայ փողոցները իրենց տեսքով գրեթէ նոյնն են, սակայն անոնց բովանդակութիւնը տարբեր է: Աթաթուրքը ամէն անկիւնէ մեզ կը դիտէ՝ յիշեցնելով, որ մենք թրքական անծայրածիր կայսրութեան սահմաններուն մէջն ենք:

«Գորշ գայլեր»ու շէնքին ճիշդ դիմացը հայկական Ս. Քառասունն Մանուկ գործող եկեղեցին է, հիմնադրուած՝ 1872ին: Եկեղեցւոյ թաղականները Երուսաղէմ (Յովսէփ) եւ Եազուպը (Յակոբ) հայերէն ոչ մէկ բառ գիտեն, իսկ Յովհաննէս Սիրաչլի, որ Պոլիս ուսած մուսալեոցի մըն է, հրաշալի հայերէսնով կը պատմէ մեզի Ալեքսանտրէթի հայու-թեան մասին: «30 ընտանիք ենք: Թէեւ երկրին մէջ անգործութիւն կայ, սակայն մեզի՝ հայերուս



Ալեքսանտրէթի հայկական եկեղեցին

լած, պեղումներու կարօտ: Արդեօք իսո՞սն է... հեռուն՝ լեռան գագաթին Հողաբերդն է, Կիլիկիոյ թագաւորութեան փառահեղ պահպաններէն մէկը, որ ներկայիս թուրքաբաշխուած է: Պատմի մէջ ծայր կ'առնէ «Կոտորածն անգուլթ» երգը...

մէջ կը հռչակէ Կիլիկիոյ Անկախ Հանրապետութիւնը, որ 6 ժամ կը տեւէ միայն: 1922ին հայերը կը պարպեն Ատանան...

Ատանայի մուտքը ազդարարող ցուցանակը կը լարէ բոլորիս ուշադրութիւնը: 974,600 բնակիչ... Յուստինեանոսի նշանաւոր քարէ կամուրջին վրայ ենք: Սիւնն գետի աջ ափին, կամուրջը անցնելուն պէս, լքուած տուններու շարք մը կը գտնես: Հին կառուցք մը, որ գմբէթը հանած հայկական եկեղեցի մըն է, վերը՝ ճակատի անմատչելիութեան վրայ պահպանած է մեր «է» խորհրդանշանը: Անցնող թուրքերը ապշահար մեզ կը դիտեն: «Ինչո՞ւ արդեօք այս անուշ, հին աւերակներուն դիմաց կը լուսանկարուին այս խնթթ օտարները»:

Տարսոնի Ս. Սոփիա մայր տաճարին մէջ կ'օժեւէին Կիլիկիոյ թագաւորները: Տարսոն, որ սկիզբը փրկելիքներու ուստանը եղած է, Մեծն Աղեքսանդրի գրաւումէն ետք դարձած է արեւելքի Աթէնքը, հռչակաւոր իր համալսարաններով: Մինչեւ օրս կանգուն է Պօղոս Առաքեալին բնակած տունը: Տարսոնի մէջ, իբրեւ հայկական հնութիւն, ունինք Օշինի եկեղեցին, որ այժմ Քիլիսա ձամիսի անունով ծանօթ է տեղաբնակներուն: Տարսոնի մօտ կը գտնուի Լամբրոնի բերդը, ուր ծնած է Ներսէս Լամբրոնացին:

Արեգնազ թաշճեան եւ Բարբիոն Գասպարեան՝ տարսոնցիներ, յիշատակի լուսանկարներ կը նկարուին՝ երջանիկ ակընթարթ մը յաւերժացնելով հայրենի քաղաքին հետ...


Մերսինը նաւահանգստային գողարիկ քաղաք մըն է: 1914ին ան ունէր 12 հազար բնակիչ, 2500ը՝ հայեր: Հայերը կը գրադէին վաճառակալներէն: Ունէին եկեղեցիներ, դպրոցներ... Ներսիս քաղաքին մէջտեղը աշտարակի պէս վեր խոյացած է 50 յարկ բարձրութեամբ պանդոկը, ուր մեր խումբը կ'անցընէ իր միօրեայ հանգիստը:

Կոռիկոսի ցամաքային բերդէն կը դիտեմ ոչ հեռու գտնուող Բերդակղզի: Սեփական ափերը լիգող ծովուն խշշոցը կարծես կը պատմէ Կիլիկիոյ հայոց թագաւորութեան փառքի օրերէն:

Կիլիկիոյ արեւմտեան սահմանին վրայ ենք: Սեյնէկիոյ անառիկ բերդին բարձունքէն կ'ըմբռնենք տեսարանը: Կալիկադոնոս գետը արծաթագոյն վիշապի պէս կը գալարուի մեր առջեւ: Նոյն այդ «վիշապն» էր, որ խեղճեց Յիբրոսիք Ծիկաձորուս գերմանացի կայսրը՝ փոխելով հայոց ճակատագիրը...

ՌՈՊԵՐԹ ԱՌԱՔԵԼԵԱՆ

# ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՏԵՐ ԶՕՐ



Ստորեւ տրուած յուշագրութիւնը - տպաւորութիւնը գրուած է ֆրանսերէնով եւ հեղինակին կողմէ չորս լեզուներով թարգմանուել է տեղ համացանցի միջոցով դրկուած է օտար հաստատութիւններու եւ անձնաւորութիւններու: Հեղինակը քաջալերելու նպատակով յօդուածը կը հրատարակենք հայերէն թարգմանութեամբ:

Ստորին հիւսիսարեւելեան շրջանը գտնուող Տէր Զօրը սրբատեղի մըն է, ուր բոլոր հաւատաւոր հայերը պէտք է այցելեն: Տէր Զօրի մէջ բոլոր հայերը, ըլլան անոնք Ֆրանսային, Լիբանանին, Միացեալ Նահանգներին կամ Աւստրալիային, կը հաղորդուին 1,5 միլիոն հայերու տառապանքով: Տառապանք մը, որ կարելի չէ արտայայտել պարզ բառերով:

Դէպի այս սուրբ վայրը ճամբորդութիւնը դիւրին չէր: Մեր առաջին կայանը Հալէպն էր, որուն ժողովուրդը համախմբուած էր դիմաւորելու Ամենայն հայոց Գարեգին Բ. եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսները: Հալէպի փողոցներուն մէջ անոնց շքախումբը կ'առաջնորդէին եկեղեցական հայրերը, որոնց կը հետեւէին մեծ թիւով հաւատացեալներ: Շեփորախումբը իր կշռոյթով թարգման կը հանդիսանար հալէպահայութեան հրճուանքին՝ այդ պատմական օրը առաջին անգամ ըլլալով դիմաւորելու զոյգ կաթողիկոսներուն ներկայութիւնը: Թափօրը կանգ առաւ Ս. Քառասունցի Մանկանց եկեղեցւոյ մէջ, որ կը յորդէր հաւատացեալներու բազմութեամբ:

Ապա բռնեցինք Տէր Զօր տանող ճամբան, ուր յաջորդ օր տեղի պիտի ունենար Ապրիլեան Եղեռնին յիշատակումը: Անպատիւն մէջ նոյնիսկ արդիական օթապիւսներով ճամբորդութիւնը մեզի դէմ յանդիման բերաւ բազմաթիւ դժուարութիւններու: Օթապիւսը խանգարուեցաւ եւ չորսուկէս ժամ անօթի, ծարաւ, յոգնած ու սպառած մնացինք այն անպատիւն մէջ, ուր անթիւ հայեր ջարդուած էին: Այս քանի մը ժամը ոչինչ էր բարդացած մեր հայրերուն տառապանքին: Այդ պահուն անհանդուրժելի էր նոյնիսկ մտածել, որ անոնք օրեր եւ ամիսներ շարունակ այս անպատիւն մէջ բռնած էին մահուան ճամբան: Մեր հայրերը պէտք է ունեցած ըլլային երկաթէ կամք եւ վսեմագոյն հաւատք՝ կարենալ սոսկալու համար այդ բոլորին:

Եփրատի վրայ գտնուող պանդոկը հասնելով՝ մեր առաջին հակազդեցութիւնը եղաւ հիանալ գեղեցկութեամբ այն գետին, որ իրենց պատիւը պաշտպանող հայ աղջիկներուն գերեզմանն էր: Մահն անպատուութեան նախընտրած այդ կոյսերը հասարակաց շատ գիծեր ունին Ս. Հոսիփոսիէի հետ: Անոնց անձանաչելի դարձած դիակները իր հուսին հետ տարած Եփրատը առաջին ակնարկով լուռ եւ հանդարտ գետ մըն է, բայց երբ խուզարկես անոր խորքերը, ջրապտոյտ մը կ'ընես նշմարել: Արդեօք մեր նահատակ կոյսերուն անհանգիստ հոգիներուն պտո՞յտն է այդ:

Վերջապէս հասաւ 24 Ապրիլը: Այդ օր սգատուն է աշխարհի բոլոր հայերուն համար: Տէր Զօրի Նահատակաց մատրան մէջ օրուան խորհուրդը աւելի զգայի էր: Մատրան մուտքին վերեւ գետեղուած էր Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակի հանդիսութիւններուն խորհրդանշանը: Չայն շրջանակած երկու նախադասութիւնները թարգման կը հանդիսանան հայ ժողովուրդին ամէնէն թանկագին բաղձանքներուն: Անոնք Աստուծոյ կը խնդրեն ամուր պահել հայ եկեղեցին եւ անմահացնել հայ ազգը: Կը թուի, թէ Աստուած իրականացուցած է այս բաղձանքները, որովհետեւ ոչ մէկ փոթորիկ կրցաւ խախտել հայ եկեղեցւոյ հիմքերը: Եւ արմատախիլ ընել հայ ազգը, որ կը շարունակէ գոյատեւել շնորհիւ իր ուժականութեան եւ յարատեւ պայքարին:

Մենք չկրցանք այդ շատ փոքր եկեղեցին մտնել, բայց հաղորդուեցանք շատ զօրաւոր զգացումներով, որոնք մեզ համակեցին նաեւ Մարկապտի մէջ, ուր նահատակներուն ոսկորները թաղուած են, եւ ուր 300 հազար հայեր նահատակուած են: Այցելեցինք Ս. Նահատակաց մատրան ստորերկրային թանգարանը, ուր տեղադրուած են օտար թղթակիցներուն Հայկական Յեղասպանութեան վաւերագրական նկարները՝ համապատասխան գրութիւններով: Բազմաթիւ ուրիշներու շարքին կարգացինք հետեւեալը: «Նահատակները աշխարհի ամէնէն հրաշալի եւ մարդկութեան ամէնէն ազնուական ժողովուրդն են»:

Վերադարձին մեզ համակած էր նահատակներուն հետ պահ մը անցուցած ըլլալու գոհուանակութիւնը: Այսօր հայ ազգը, հակառակ «անօթութեան, ծարաւի, չարաչարութիւնի կրակի», յարուստեւ առած է մոխիրներէն:

# ԵՂԵԼ Է ԵՒ ԶՈՂ ԵՒ ՎԿԱՅ ԱՄԵՆԻՑ ԱՀԱՒՈՐ ԶԱՐԴԻՆ ԲԱՅՑ ԱՊՐՈՒՄ, ԾԱՂԿՈՒՄ Է ՈՒ ԿԱՅ... ՀԱՍՕ ՍԱՐԵԱՆ

Թուականէս 87 տարի առաջ դարձեալ գարուն էր դարձեալ ամիսը՝ Ապրիլ:

Բայց այդ գարունը ու այդ ամիսը Ապրիլ, չէին նման այս գարնան ու այս Ապրիլին:

Այդ գարնան ու այդ Ապրիլին՝ հայուն երկինքը կապոյտ՝ շանթ մը կ'ակօսէր անհղօրէն:

Մարիկ մը նոր ու փոթորիկ մը խօսարշաւ կը հաւաքէին իրենց ծովացող ուժերը:

Երեւոյթ՝ խորհրդաւոր: Նշան՝ տարօրինակ: Արդեօք վաղուան մը դժոխային երկունքն էր: Կտրուկ: Այո՞:

Տրուեր էր հրաման մը հայալինը:

Հայկական շէն գիւղերը, ծաղիկեալ քաղաքները կը պարպուէին բռունցքներու տակ՝ մարդակեր գազան մարդուն: Հողաբոյր մարդերէն մինչեւ կաթնակեր մանուկներուն յորդառատ գետ մը կ'անցնէր: Կ'անցնէր հառաչանքներու յորձանապտոյտ ալիքներու մէջէն:

Ինչո՞ւ: Դէպի ո՞ր:

Ինչո՞ւ,- որովհետեւ հայ քրիստոսապաշտ ազգ էր, ուր աշխարհի ազգերուն մէջէն առաջին ազգն էր, որ քրիստոնէութիւնը ընդունած էր պետականօրէն:

Առաւել, քաղաքակրթութեամբ ազգի մը բոլոր տրեւայները ունէր՝ պատմութիւն, մշակոյթ, գրականութիւն, ճարտարապետութեամբ՝ ու այն ամէնէն հիններէն եւ ամէնէն ճոխներէն:

Այսու մէկ տեղ, նաեւ հայութիւնը անցեալ չէ, այլ միշտ՝ ներկայ:

Կոտորածը սովախանձ, ուր որ կը հասնէր, իր ետին կը թողուր լուռ մը աւերակ, բոլոր մը դիակ, ծով մը արիւն:

Անգամ մը եւս կը ճշմարտուէր Ֆրանսացի մեծ գաւազին՝ բանաստեղծ ու վիպասան Վիլիամ Զիւլիոյ խօսքը: «Այստեղին թուրքն էր անցեր»:

Ան անհանգիստ կ'ըլլայ, կը խոսի, կը տազանալի, երբ տեսնէ իր շուրջ աշխատող ու աշխատանք, կենարար գործ ու բարգաւաճում:

Ինչո՞ւ:

Որովհետեւ ինքը սովոր չէ ապրիլ չէն գիւղերու, լուսաւոր քաղաքներու մէջ: Իրեն հարկ է անմաքդարնակ վայրեր, ամալի տարածութիւններ, որպէսզի իշխել կարենայ գազանաբար:

Որովհետեւ ինքը վարժ չէ հայալ աշխատանքի, արդար քրտինքի, մարդավայել ապրելակերպի, այլ միւսիայն՝ դաւանի, կողպուտի, աւագակութեան ու ոճ-րագործութեան:

Թող լաւ գիտնան մեր երէկի եւ այսօրուան բոլոր թշնամիները ու սերտնի մեր պատմութիւնը՝ հազարամեակներ կենանք ունեցող:

Պիտի նշմարեն հոն, դար չկայ, որ յօշոտուած չըլլան հայու մեր հոգիները, հայու մեր հողերը, կողպատուած չըլլան հայու մեր ոստանները, հայու մեր հարստութիւնները, ու քանդուած հայու մեր գիւղերն ու քաղաքները:

Այո՞, դար չկայ որ պղծած ու աւերած չըլլան մեր հայու տաճարները աստուածակերտ ու վանքերը մտքի ու լոյսի փարոս:

Ինքն ալ փորձել ուզեց: Ու փորձեց այնպէս, որ հայը մնայ նմուշ թանգարանային ու մնայ պատմութեան լուսանցքին վրայ՝ իբրեւ չոր ու ցամաք անուն մը:

Բայց չէր գիտեր կամ գիտնալ չուզեց, որ հայու սպանդը աւելի աճ է ու ծաղկուն, անոր քար ու քանդուած՝ ալ աւելի վերելք, ու այդ մենք աշխարհին ցոյց տուինք ոչ թէ խօսքով, այլ գործով:

Երեք տարին չանցած, մեր անաւոր սուգէն ու արցունքը - արիւն ծովէն, Աւարայրի ոգիով, Մարդարայատի պայքարով՝ Հայուն ազատութեան Այգեբազը ողջուեցինք ու կոթողեցինք երեք գոյն դրօշը հայուն:

Այո, երեք տարին չանցած մեր անաւոր ջարդէն, երէկուան մեր հարիւրաւոր դաշտով, գիւղով ու քաղաքով, հայրենիք մը դարձած գերեզման ու ամալի, միլիոն ու կէս հայ մարդ մորթուած, մնացորդաց մը լքուած իր բախտին՝ անտէր - անտիրական, ըսինք աշխարհին, բանաստեղծին բերնով: «Հայը ապրում, ծաղիկում է ու կայ... Ահա՛ Հայաստանը»:

Բայց ամա՛ղ, հազիւ երկու տարի տեւեց անոր գոյատեւումը: Մեր հայրենիքը դարձաւ սովեւ հայրենիք, ու երեք գոյն դրօշը փոխարինուեցաւ կարմիր դրօշով՝ մուրճ - մանազողով:

Եթեանասուն երկար տարիներ տեւեցին մուրճ - մանազողի տակ ապրող հայութեան տառապանքները: Բայց այլ տակաւ ու ստեղծագործեց: Տուաւ իր շրջապատին, մարդուն ու մարդկութեան՝ իր մտքէն, իր սրտէն, իր հոգիէն, եւ այն ալ՝ առանց հաշուի ու կշռի, ու մանաւանդ՝ առանց հատուցումի ու ակընկալութեան:

Այսօր, գարձեալ ունեցանք անկախութիւն ու ազատ պետականութիւն, դարձեալ մեր երեք գոյն դրօշը ոչ միայն հայրենի հողերուն վրայ կը ծածանի, այլ ՄԱԿի երկնամերձ ապարանքին վրայ՝ միւս դրօշակներու կողքին:

Հարցումը արտօսաւ:



Ատանա - հին հայկական տուն:

շատ կը վստահին, ուստի եւ անգործ չենք»: Պէ՛տք ունենան հայր Մեքրոպը, որ մեր խուճերին մէջ է, հրաժեշտէն առաջ պատարագ մը կը մատուցէ Ալեքսանտրէթի Ս. Քառասունն Մանուկ եկեղեցւոյ մէջ:

Ալեքսանտրէթ - Ատանա ճանապարհը կ'անցնի Տէօրթ - Եօլ քաղաքին քովէն: Զախին երկա՛ր, խորհրդաւոր եւ անհիւրընկալ քաղաք մըն է, ցածրայարկ կառուցներով, որոնք ծպտուած գոյութիւնը կ'ենթադրուի սաղարթախիտ ծառերու փարթամութեան մէջ: Անծայրածիր նարնջենիներու մէջէն մզկիթներու սուր մինարէներ կ'երեւին եւ ուրիշ ոչինչ:



Կաստիմիանոսի կամուրջ

Աղին, Տէօրթ - Եօլէն 10 քիլոմետրի վրայ հին աշխարհէն մնացած խեցիցած քաղաք մըն է: Արդեօք ո՞ր ժողովուրդի քաղաքակրթութիւնն է ան. գետնատարած, գեր-



Հողաբերդ:

կաշրջանին կառուցուած են Ս. Աստուածածին, Ս. Ստեփանոս, Ս. Յակոբ, Ս. Մարգրիտ եւ այլ եկեղեցիներ: 20րդ դարուն սկիզբը հայ երեք համայնքները Ատանայի

մէջ ունէին տասնեակ եկեղեցիներ, դպրոցներ, մշակոյթի տուններ: 1909ին տեղի ունեցաւ Ատանայի կոտորածը, 4 Օգոստոս 1920ին Միհրան Տամատեան Ատանայի

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ԵՐԵՎԱՆ

ԱՉԳԱՅԻՆ ՈՒՔԵԿՈՉՍԱՆ ԵՒ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՕՐԸ՝ 24 ԱՊՐԻԼ

ՍԵԼԱՆԻԿ

Այսօր, առաւօտեան կանուխ ժամերէն սկսեալ, հայրենի հայրենիքը իր պետական անկախութիւնը եւ քաղաքական ու եկեղեցական բարձրաստիճան ներկայացուցիչներով կ'այցելէ Միջին Արեւելքի յարգանքի իր տուրքը մատուցանելու Հայկական Յեղասպանութեան 1,5 միլիոն զոհերուն:

Այսօր Միջին Արեւելքի Հայկական Յեղասպանութեան թանգարանին մէջ կը սկսի ժամանակակից գեղանկարչութեան մեծ դէմքերէն Փրանսահայ Ժաննա Բոնի (Յովհաննէս Սէմէրճեան) գործերուն ցուցադրութիւնը: Յուցահանգէլը, որ նուիրուած է Յեղասպանութեան զոհերու յիշատակին, պիտի շարունակուի մինչեւ 24 Յունիս: Բացման հանդիսութեան ներկայ պիտի ըլլայ նաեւ արուեստագէտ Ժաննա Բոնի, որ պատրաստակամութիւն յայտնած է իր «Եղեռն» նկարներու շարքը նուիրելու թանգարանին:

Մարտի 24-ը Երեւանի մէջ պետական համալսարանի ուսանողական ակումբներու համախմբումը երիտասարդ դիւանագէտներու ակումբը Հայկական Յեղասպանութեան 87ամեակին առիթով Ապրիլ 18-26 շաբաթը յայտարարած են «Երիտասարդութիւնը՝ ընդդէմ ցեղասպանութեան» շաբաթ, որուն ընթացքին տեղի պիտի ունենան շարք մը ձեռնարկներ: Նախատեսուած են հանդիպումներ Հայկական Յեղասպանութեան թանգարան, Հիմնարկի տնօրէն Լաւրենտի Բարսեղեանի եւ Յեղասպանութեան վերապրողներու նուիրուած գիրքերու հեղինակներու հետ: Նախատեսուած է նաեւ քայլարշաւ մը դէպի Միջին Արեւելք եւ կլոր սեղան մը՝ «Հայկական Յեղասպանութեան ճանաչման հեռանկարները» նիւթին շուրջ:

ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

Լոս Անճելոսի թրքական դեսպանատան առջեւ այսօր տեղի պիտի ունենայ ցոյց մը, կազմակերպութեամբ Հ. Յ. Դ. Արեւմտեան Ամերիկայի Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան: Գոյցին նպատակն է դատապարտել մարդկութեան դէմ գործուող ոճիրները, միաժամանակ թուրքիոյ կառավարութեան պահանջները Հայկական Յեղասպանութեան ճանաչումը:

ԿԼԵՆՏԵՅԼ

Կլենտէյլի քաղաքային խորհուրդը անցեալ շաբաթ Ապրիլ 24ը ամբողջ քաղաքին մէջ յայտարարեց «Հայկական Յեղասպանութեան Յիշատակումի Օրը»: Քաղաքապետ Բաֆ-

Երեւ, աշխարհի բովանդակ հայութեան համար 23 Ապրիլ 2002 էր: Երեքշաբթի, 23 Ապրիլ էր նաեւ Ֆրանսացիին, չինացիին, ձափոցիին ու ռուսին համար: Այսօր, անոնց համար Ապրիլ 24 է, 2002ի Ապրիլ 24, իսկ մեզի համար...

Բոլորին նման մենք եւս տարուան մէջ ունինք Յունուար 20, Մարտ 4, Օգոստոս 15, Նոյեմբեր 20 կամ պատահական որեւէ օր, սակայն ահա 87 տարի է ի վեր Ապրիլ 24ը մեզի համար 1915 թուականն է: Այդ օր ժամանակը կամզ կ'առնէ, քանի մենք տակաւին չենք յաղթահարած եղեռնը: Քանի ան մեզի համար տակաւին պատմութիւնը չէ, «Երեւան» է: Այսօր բոլորս կը նոյնամանք իրարու, կը ժամադրուինք իրարու հետ: Կ'ուզենք կողք - կողքի ըլլալ, առանձին չզգալ եւ հաւաքակազմութեան մը մաս կազմելու ջերմութիւնը ապրիլ, ազգային - պահանջատիրական ձեռնարկներով ու բողոքի ելոյթներով:

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս, Ապրիլ 24ի պահանջատիրական ձեռնարկներու շրջան կ'երկարի գաղութ գաղութ, հասնելու համար մինչեւ մայր հայրենիք՝ Հայաստան, Արցախ եւ հայրենի Ջալալաբադ:

Ստորեւ՝ ընդհանուր ակնարկ մը տեղի ունենալիք զլխաւոր ձեռնարկներուն մասին:

Ֆի Մանուկեան քաղաքային խորհուրդի նիստին ընթացքին այս յայտարարութիւնը ներկայացուց կ'ընտելէ իր ամերիկահայ գաղութի ներկայացուցիչներուն:

Ապրիլ 21-26ի միջեւ «Երիտասարդութիւնը» ծիրէն ներս, կ'ընտելէ իր մէջ այսօր եւ վաղը տեղի պիտի ունենան Հայկական Յեղասպանութեան նուիրուած շաբթ մը ձեռնարկներ:

Ապրիլ 21ին կ'ընտելէ կեդրոնական գրասենյակին մէջ արդէն տեղի ունեցաւ «մարդու նկատմամբ մարդու անմարդկութիւն»ը նիւթով գրոց մը:

Այսօր կ'ընտելէ քաղաքի լսարանին մէջ տեղի պիտի ունենայ Հայկական Յեղասպանութեան յիշատակումի ձեռնարկ մը: Ձեռնարկը պիտի ընդգրկէ դասախօսութիւն, վիտեօ երիզ ցուցադրութիւն եւ արուեստի գործերու ցուցահանգէս:

Ապրիլ 26ին, պիտի կատարուի շաբթուան ձեռնարկները երաժիշտութիւն մը, որ պիտի աւարտի հակումով:

ՏԻԹՐՈՅԹ

Ապրիլ 21ին Տիթրոյթի մէջ տեղի ունեցաւ Հայկական Յեղասպանութեան 87ամեակին նուիրուած հանդիսութիւն մը, որուն ներկայ գտնուեցան Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան մէջ Յեղասպանութեան ճանաչման պաշտպան քոնկրէսականներ Ջո Նորլընդը եւ Տէյլիտ Պոնիքը: Հանդիսութիւնը կազմակերպուած էր Հայկական Յեղասպանութեան Ոգեկոչման Տիթրոյթի Միացեալ յանձնախումբին կողմէ:

Նշենք, որ այս երեկոյ Տիթրոյթի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ եկե-

ղեցական արարողութիւն մը՝ ի յիշատակ Յեղասպանութեան 1,5 միլիոն զոհերուն:

ՔՈՆԿՐԵՍԻ ԱՌՁԵՒ

Քոնկրէսական էտըմ Շիֆ այսօր անգամ մը եւս պիտի ոգեկոչէ Յեղասպանութեան 1,5 միլիոն զոհերուն յիշատակը՝ Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան առջեւ իր խօսելիք ճառին մէջ: Անցեալ տարւան նման այս տարի եւս քոնկրէսական Շիֆ ճառին մէջ պիտի յիշէ Յեղասպանութեան զոհերուն անունները, որոնք պիտի արձանագրուին Քոնկրէսի օրական լոյս տեսնող տեղեկագրի մէջ: Առ այդ, քոնկրէսական Շիֆի գրասենյակը հրատարակած է հաղորդագրութիւն մը, որուն մէջ Հայ ընտանեկաններէն կը խնդրէ իրեն փոխանցել Յեղասպանութեան զոհերու անուններ՝ անոնց ձայնը ձեռքով մը լսելի դարձնելու նպատակով:

ՍԻՏՆԻ

Սիտնիի մէջ, այսօր տեղի պիտի ունենայ Հայկական Յեղասպանութեան 87ամեակի հանդիսութիւն մը, որուն հիւր - դասախօսն է Բաֆֆի Յովհաննէսեան: Իսկ Ուրբաթ, Ապրիլ 26ին, Նիւ Սաութ Ուէյլի Հայկական Յեղասպանութեան յուշարձանին առջեւ պիտի կատարուի «Ծաղկեպսակի» զետեղում, որուն պիտի յաջորդէ բանախօս՝ Բաֆֆի Յովհաննէսեանին ելոյթը:

Մելպուռնի մէջ 27 եւ 28 Ապրիլին յաջորդաբար տեղի պիտի ունենան ձեռնարկ մը եւ հանրային դասախօսութիւն մը, որոնց դարձեալ ելոյթ պիտի ունենայ Բաֆֆի Յովհաննէսեան:

ԹՐՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ԴԷՄ ԲՈՂՈՔԻ ՅՈՅՅ՝ ՕԹԱՌԻԱՅԻ ՄԷՋ

Մարտ 29ին, Հ. Յ. Դ. Քանաթայի Երիտասարդական Միութեանն եւ Հայ Դատի Յանձնախումբի Մոնթրէալի ու Լաւալի գրասենյակներէն 25 երիտասարդներ բողոքի ցոյցով մը իրենց ընդդէմը յայտնեցին Օթաւայի Քարլթոն համալսարանին մէջ թրքական երկօրեայ խորհրդաժողովի մը բացման նիստին:

ՀԱԿԱՀԱՅ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ՄԸ

Հայ երիտասարդներու խումբը իր պատասխանատուութիւնը, ինչպէս նաեւ նիստին ընթացքին ներկայացուցած իր հարցումներով լուսարձակի տակ առաւ թուրքիոյ իսկական դիրքը եւ մանաւանդ՝ Հայկական Յեղասպանութեան ուրաջութիւնը: Անակնկալի եկած թուրք մասնակիցներէն ոմանք գայրոյթի խօսքեր ուղղեցին ցուցարար երիտասարդներուն եւ կարգ մը թուրքիկներ պատեցին, իսկ քանաթայի մասնակցողներ նշեցին, թէ իրենք բաւական ծանօթ են թուրքիոյ «պահուած» երեսին: Թուրք ուսանողներու փոքրամասն խումբը մըն ալ յայտնապէս նեղի մասնաբաժնով՝ փորձեց երկխոս-

Յունաստանի Սելանիկ քաղաքին մէջ այսօր տեղի կատարուի եղեռնի զոհերու յիշատակին արարողութիւն մը, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

Կիրակի, 21 Ապրիլին, Մակեդոնական Ուսումնասիրութիւններու կեդրոնին մէջ տեղի ունեցաւ յիշատակի ձեռնարկ մը, որուն ընթացքին խօսքեր արտասանեցին Յունաստանի կառավարութեան մէջ Մակեդոնիոյ եւ Թրակիոյ հարցերու նախարարը, Հայաստանի դեսպանը, քաղաքապետ Քոսթաս Փափատոփուլոս, կառավարիչ Վասիլիս Փափակէօրկիտփուլոս, եւ տեղույն Հայ Համայնքին ներկայացուցիչը: Օրուան բանախօսը՝ լրագրող Ալեքսիս Փափակէյաս ներկայացուց «Պատմական ճշմարտութիւնը եւ ժամանակակից իրողութիւններ» թուրքիոյ հարցը» նիւթը:

ՓՈՒՐԻՉ

Փարիզի մէջ, անցեալ շաբաթ ամբողջացուած է Ֆրանսական ազգային արխիւներէն Հայկական Յեղասպանութեան վերաբերեալ փաստաթուղթերու հաւաքման աշխատանքը: Աշխատանքը իրագործած ԱՆԻ հիմնարկի («Արմինիոն Նէյլընը Ինսթիթիւթ») ակադեմիական խորհուրդի անգամ Քլէր Մուրատեանի համաձայն, Ֆրանսայի դիւանագիտական, գիւնուորական եւ հիւպատոսական արխիւներու ուսումնասիրութիւններէն ի յայտ եկած են Հայկական Յեղասպանութեան կապուած հազարաւոր փաստաթուղթեր, որոնք կ'ընդգրկեն նաեւ Ֆրանսացի գիւնուորական եւ քաղաքային պաշտօնեաներու, ինչպէս նաեւ միսիոնարներու հաղորդագրութիւններ:

Ուսումնասիրութիւնը կատարուած է 1895 - 1920 երկարող ժամանակաշրջանի արխիւներու վրայ, եւ փաստաթուղթը գտնուած են 1895 - 1896ի ջարդերուն եւ 1909ի կիլիկիոյ ջարդին մասին:

Ք. Մուրատեան այս աշխատանքին մասին խօսելով՝ ըսած է, թէ ան Հայկական Յեղասպանութեան մասին նոր բացայտումներ կը կատարէ: «Կը հաւատանք, թէ յաւելել փաստաթուղթեր կրնան գտնուիլ Հայկական Յեղասպանութեան ականատես անձնական հաստատութիւններու, դիւանագէտներու եւ միսիոնարներու արխիւներուն մէջ», ըսած է Մուրատեան:

պաշտպանութեան բաժանմունքին յատկացուած ֆոնտին կողմէ: Այս խորհրդաժողովին ներկայացուցելու իրենց «արկերութեան մը տիպար» դի, բաց եւ քաղաքացիական բարձր մակարդակով ընկերութիւն մը», որ էր թրքական դեսպանատան, եւ ֆինանսաւոր կիրքներուն հետ բաղդաուած էր Քանաթայի տած յառաջողութիւնը:

ՀԱԿԱՀԱՅ

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ՄԸ

«Անատոլու» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Ապրիլ 20էն 21 Անգարայի Ազգային մատենադարանին մէջ տեղի ունեցաւ Հայաստանի եւ ընդհանրապէս հայկական հարցերու շուրջ խորհրդաժողովի մը կազմակերպութեամբ նորաստեղծ Հայկական ուսումնասիրութիւններու հիմնարկին: Նշեալ հիմնարկը կը հրատարակէ քառամսեայ պարբերաթիւթ մը, հակահայ բնոյթի «ուսումնասիրութիւններու» բովանդակութեամբ: Հիմնարկը կը գործէ «Նուրե-ժիա ռիսըրչ սենթըր»ի հովանաւորութեամբ:

Խորհրդաժողովին իրենց մասնակցութիւնը բերած են մօտ 100 թուրք ակադեմիականներ: Տեղի ունեցած են ներկայացուցիչ Հայաստանի եւ հայ ժողովուրդի պատմութեան, կրօնի, մշակութիւնի եւ իրականութեան հարցերու կազմաւորութիւն մասին: Խորհրդաժողովը քննած է նաեւ «հայ ժողովուրդին դիրքը միջազգային ապարէզին եւ միջազգային ահաբեկչութեան մէջ»:

ՀԱՄԲԻԿ ԱՍՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՏԵ  
HAMPIG SASSOUNIAN  
CSP - L.A.C. B - 5 - 131 44750  
60-TH ST. WEST LANCASTER  
CA, 93536 — USA

ՀԱՅԱՆՊԱՍՏ ԱՐՉԱՊԱՆԳ

ՄԵՐԺԵԼՈՎ ՄՈՌԵԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Ապրիլ 24ին, հայեր աշխարհի տարածքին կը յիշատակեն Հայկական Յեղասպանութեան 87ամեակը: Անոնք կը յիշեն, թէ 1915ին, Օսմանեան կայսրութիւնը ի գործ դրաւ ծրագիր մը՝ բնաջնջելու համար այսօրուան թրքական հանրապետութեան մաս կազմող Արեւելեան Անատոլիոյ ամբողջ հայ բնակչութիւնը:

Ա. Աշխարհամարտի պատերազմական իրադիճակէն օգտուելով, ծայրայեղ աշխուժեցան Երիտասարդ Թուրքերու վարչակարգը, որ կ'իշխէ Օսմանեան կայսրութեան, շրջապագրեց հայ բնակչութիւնը արմատախիլ ընելու եւ բնաջնջելու արշաւ մը: Աշխարհի տարածքին, դէտեր ցնցուած էին քաղաքները, գիւղերը կամող Հայ բնակչութեան պարպուելու նկարագրող պատմութիւններէն: Հէնրի Մորկընթալ, Միացեալ Նահանգներու այդ օրերու դեսպանը թուրքիոյ մէջ, հայերու դէմ թրքական ոճիրը կոչեց «Տեղի սպանութիւն»: Անիկա ամբողջ քաղաքակրթութիւնն էր քանդուած:

Տարիներ ետք, լեհ-հրեայ իրաւաբան Ռաֆայէլ Լեքիս ստեղծեց եզր մը՝ նկարագրելու համար հայրենիքի զոհերուն յիշատակը: «Երեւան» է:

Օրին, երբ ոճիրը գործուեցաւ, աշխարհի առաջնորդները դատապարտեցին զայն: Այսուհանդերձ այսօր շատ քիչեր հրապարակաւ կ'անդրադառնան անոր: Խորքին մէջ, բազմաթիւ դպրոցներու եւ համալսարաններու մէջ Հայկական Յեղասպանութեան անհշուտ յիշատակը չեն դասաւանդուիլ:

Այս մէկը պատճառ մը ունի: Թուրքիոյ այսօրուան կառավարութիւնը գործնապէս կը մերժէ ընդունիլ, որ նման ոճիր երբեք տեղի ունեցած է: Վախնալով, որ ան կ'ը հարկադրուի նիւթակապ հատուցում վճարել հայերուն, Թուրքիա լոպիից կ'ընէ՝ արգիլելու համար Հայկական Յեղասպանութեան ճանաչումը:

Յեղասպանութեան աննկատ մնալը մեծ ազդեցութիւն գործած է աշխարհի տարածքին ապրող հայերուն վրայ: Հոգեբաններ կ'անդրադառնան անոնցմէ շատերուն մօտ անդրսերնդային վիշտի: Հայկական ինքնութիւնը, բարեբախտաբար թէ դժբախտաբար, մեծ չափով ձեւաւորուած է Յեղասպանութեան հաւաքական յիշողութեան եւ թրքական ուրացումին վրայ: Ուրացումի դէմ պայքարը եւ ճանաչումին ի

նպաստ գործելը հիմնաքարերը դարձած են Հայաստանի կառավարութեան արտաքին քաղաքականութեան: Այս մէկը կ'ենթադրէ ներուժ եւ նիւթակապ միջոցներ, որոնք կրնան այլ տեղեր ծախսուիլ, յատկապէս վերակառուցելու համար Հայաստանի յետխորհրդային տնտեսութիւնը: Ամերիկահայ կազմակերպութիւններ ժրջան աշխատանք տարած են իրենց տեսակետը լսելի դարձնելու համար, յաճախ լոպիիցի միջոցով Յեղասպանութեան յիշատակումներուն քաղաքագէտներու ներկայութիւնը ապահովելով: Կը ծրագրուի նոյնիսկ Հայկական Յեղասպանութեան թանգարան հիմնել Ուաշինկթընի մէջ, որ կը նպատակադրէ հանրութեան դաստիարակութիւն տալ ո՛չ միայն Հայկական Յեղասպանութեան, այլեւ մարդկութեան դէմ գործուած այլ ոճիրներու եւ հաւաքական սպանութիւն մասին:

Բարեբախտաբար, ակնառու կարգ մը պատմաբաններ ուսումնասիրական լայնածաւալ աշխատանք տարած են ջարդին շուրջ: Էլի Ռիզըլ, Նոպէլեան մրցանակակիր եւ Ողջակիզումէն վերապրող մը, առանց արդիւնքի հասնելու նոյնիսկ փորձած է համոզել թրքական կառավարութիւնը, որ փոխէ իր կեցածքը:

Շատ քիչեր կը վիճին, թէ ժամանակակից Թուրքիոյ կառավարութիւնը պատասխանատու է մօտ հարիւր տարի առաջ գործուած ջարդին համար: Բազմաթիւ ամերիկացիներ կը գնահատեն Թուրքիոյ կառավարութեան աջակցութիւնը ահաբեկչութեան դէմ պատերազմին: Այսուհանդերձ, Թուրքիա պատասխանատուութիւնը ունի ճանաչուելու իր անցեալին մէկ ողբերգական իրադարձութիւնը: Հայերը, իրենց կարգին, պէտք է յարաբերութիւն մշակեն բարեխիտ թուրքերու եւ թուրք-ամերիկացիներու հետ եւ հասնին որոշ հաշտութեան:

Այս Ապրիլ 24ին, Քոնքրէսի ժողովի եւ այլ շրջաններու հայերը պիտի նշեն Յեղասպանութիւնը կառավարական հաստատութիւններու, եկեղեցիներու եւ զլխաւոր քաղաքներու փողոցներուն մէջ: Նոր դարձ մը արշալոյսին, ամերիկացիները պէտք է տեղեկ ըլլան անցեալ դարու ամէնէն վատ ոճիրներէն մէկուն:

ՃՈՆԱԹԱՆ ԷՐԻՔ ԼՈՒԻՍ

«Հարթֆորտ Քուրաք»

# Միջապալին Քաղաքական Կեանք

## ԺԵՆԻՆ ԱՄՕԹԻ ԽԱՐԱՆ՝ ԻՍՐԱՅԷԼԻ ՃԱԿԱՏԻՆ

87 տարի առաջ, երբ իր նմանը չունեցող Ցեղասպանութեամբ մը, հայ ժողովուրդը կը կորսնցնէր իր համրանքին մէկ երրորդը եւ հողերուն հինգ վեցերորդը, լուսակարչական հագիւ քանի մը ոսպընեակներ միայն աղաղակիչ վկաները կ'ըլլային կատարուածին ահաւորութեան:

Այսօր, արդի արհեստագիտութեան եւ հաղորդակցութեան օրերուն, պաղեստինցիք իրենց ցաւին մէջ իսկ կրնան բախտաւոր նկատուիլ, որովհետեւ անոնք իրենց կողքին ունին արաբական ու եւրոպական աշխարհի յանձնառու լուսակարիչներու ամբողջ փաղանգ մը, որ աներեւակայելի զոհողու-

թիւներով ոչ մէկ ջանք կը խնայէ իւրայելեան անմարդկային արարքները ժամը-ժամուն աշխարհին սեփականութիւնը դարձնելու:

Ստորեւ տրուած լուսակարները կը ներկայացնեն վայրագօրէն ջարդի ու աւերումի ենթարկուած ժենիի գաղթականները վերջին օրերուն:

Կարելի չէ անտարբեր աչքերով դիտել այս լուսակարները եւ, իբրեւ իրաւագրկումի գառնութիւնները ճաշակած ժողովուրդ, չգօրակցիլ անոնց, որոնք գիտեն ապրիլ հերոսութեամբ ու մեռնիլ նահատակութեամբ:



Պաղեստինցիներ հաւաքական գերեզմաններու մէջ կը թաղեն իրենց սպանուած հարազատները:



Աչքերն ու ձեռքերը կապուած պաղեստինցիի մը ածխացած դիակը:



Բազմաթիւ պաղեստինցիներ սպանուեցան մնալով իրենց բնակարաններու վրատակներուն տակ



Փլատակներու տակէն ողջեր յայտնաբերելու փորձեր:



Համատարած քանդում...



Դիակներու փոխադրութիւնը բեռնակառքերով...



Առանց մեկնաբանութեան...

## ՔՈՏՈՐԻ ՄԷՉ ՌՈՒՍԻՈՅ ԽՈՒՍԱՆԱՒՈՒՄԸ ԿԸ ԲԱՑԱՅԱՅՏԵ ՎՐԱՑԱԿԱՆ ՇԱՀԵՐՈՒՆ ԹՆՃՈՒԿԸ

Ահաբեկչութեան դէմ պայքարի իրենց համաշխարհային ցանցը ընդլայնելու նպատակով Միացեալ Նահանգներ նպատակադրած են զինուորական խորհրդատուները զրկել Վրաստան այս տարի: Սակայն ռուսական ասպատակութիւնները աւելի կը դժուարացնեն շրջանին մէջ ազատ նահաւարկումը: 12 Ապրիլի առաւօտեան ռուսական հետեւակ ուժերը մտան Քոտորի կիրճը, որ անխտում պահանջող Աբխազիոյ մէջ վրացական կարեւոր յենակէտ մըն է: Ըստ վրացական սահմանապահ ուժերուն, իբրեւ հակադարձութիւն ռուսական ուժերը ռուսական զինուորական փոխադրական մը քշած էին դէպի Քոտորի ձորը: Յաջորդող դէպքերը բանալիէն առարկայ են սակայն երկու կողմերն ալ կը նշեն, որ ռուս զինուորներ փոխադրող վերջին ուղղաթիւրը 14 Ապրիլին հեռացաւ կիրճէն:

Ըստ երեւոյթին, Ռուսիա կ'ուզէ փորձել, թէ ճիշդ որքան կրնայ իր ազդեցութեան ծիրը ընդլայնել դէպի Վրաստան, առանց միջազգային եւ ամերիկեան ընդդիմութիւն գրգռելու: Արագական կառավարական աղբիւրներու համաձայն, ՄԱԿը կ'ուզէ ճշգրիտ վերջերս Ռուսիոյ կողմէ սահմանային այդ խախտումներուն տարողութիւնը: Լրատուական տեղեկագրութիւններ դիտելու համար 100 էն պակաս էր: Նոյն այդ աղբիւրները կը նշեն, որ շուրջ 500ի հասնող ռուս հետեւակազօրք, ներառեալ ցամաքային այլ ուժեր եւ նուազագոյնը 6 ուղղաթիւներ, կտրած են ռուս-վրացական սահմանը:

Վրացի 300 զինուոր հաշուող զօրամասին զգուշօրէն համադրուած նահանջն ենթա, որ աւարտեցաւ 10 Ապրիլին, ուստի հարց կու տան, թէ արդեօք Ռուսիոյ այդ քայլը զգուշացում մը քայլ է համարել: Վրացի կարգ մը թղթակիցներ կը վախանան, որ ամերիկացիներու եւ դաշնակիցներուն կողմէ հակահարձակումները վրացիները մարտնչելու համար ռուսական ուժերուն Ռմանք կը կասկածին, որ ամերիկացի մարտնչներուն իսկական առաքելութիւնը վրացիները մարտնչելն է Աբխազիոյ եւ Հարաւային Օսեթիոյ բռնազրաւումին համար, որ ի վերջոյ ուղղակիօրէն մարտահրաւէր կ'ուղղէ Կովկասի մէջ ռուսական ազդեցութեան:

Վրաստանի նախագահը հտուարտ Շեւարտնաձէ եւ իր բոլոր խաղընկերները հրապարակաւ պաշտօնապէս խոստացած են քաղաքական լուծում մը անպայտօն արտայայտութիւններու ունեցած է եւ իր բոլոր խաղընկերներուն հետ շարունակելու Վրաստանի մէջ ՄԱԿի դիտորդներու առաքելութեան քաղաքական աւագ խորհրդատու Տոմիլիքի ինժեներներ 5 Ապրիլին «Նուրեթիանէք»ին ըսաւ,

բանակէն կու գան: Կարգ մը դիտորդներ կը հաւատան, թէ վերոնշեալ փաստերը, այլ փաստերու եւ փաստագրութիւններու հետ միասին, ցոյց կու տան, որ լաւապէս համադրուած եւ հաստատուած զէնքի տարանջիկ շրջանառութիւն կը կարգաւարտուի Վրաստանի վրայով, որ հաւանաբար մօտէն կ'աւանչուի Վրաստանի ապահովական սպասարկութիւններու հետ:

Փախստականներու ճամբաներ նաեւ կը տանին դէպի Ռուսիա: Ըստ վրացական «Ռուսթաւի 2» հեռատեսիլի կայանի հանրածանօթ «60 վայրկեաններ» քննարկային յայտարարութիւնը վարող Աբաքի Կոկիչաշվիլի, ինք տեսած է պահուած քամերայով նկարուած տեսարկ մը, ուր «վրացի զօրավար մը զէնք կը ծախէ չեչեններուն, Փանքիսի կիրճին մէջ»: Մանօթ է, որ վրացի կարգ մը բարձրաստիճան պաշտօնատարներ նախկին «Քէյ-Ճի-Պի»-ի կամ «Ճի-Աու-Եու-»ի (զինուորական գաղտնի սպասարկութեան) անդամներ եղած են: Ըստ Կոկիչաշվիլի, տեսարկի մէջ երեւցող զօրավարը կը նշէ, թէ իր զինամթերքին աղբիւրը Յիւրիսի (հարաւային Օսեթիա) մէջ հաստատուած ռուսական զօրաբաժին մըն է:

Ան նաեւ նշեց, թէ Վրաստանի բանակի հազար տեսակաւ բաժինի կազմաւոր պատասխանատու Ջազա Մազմիշվիլի նեցուկ կը կանգնի այդ զօրավարին գործունեութեան: «Մենք շատ վստահելի տեղեկութիւններ ունինք, որ այդ զօրավարը թրիսթան Յիւրիսիոյ գործակալ» կը պնդէ Կոկիչաշվիլի, աւելցնելով, որ «ան նաեւ կապ ունեցած է մարտնչ առեւտրականին հետ: Իրողութեան մէջ այդ տեսարկի մէջ ան նաեւ կը խօսի, թէ ինչպէս պիտի առեւտրական վրացի տեսախանութեան մը: Ան նոյնիսկ հարցաքննութեան չէ կանչուած այդ հարցով: Մենք շատ մը ձեռքով փորձեցինք պատասխանատուութեան հրաւիրել տալ զայն, բայց ոչ մէկ կառավարական կառույց որեւէ քայլի կը դիմէ: Կարծես մենք դպած ենք սառցալեռան մը զագաթին եւ չենք կրնար աւելի խորը թափանցել ցարդ» (նշեց, որ Կոկիչաշվիլի յայտարարութեան աղբիւրը մեծ աղուկ բարձրագուցած է այս հարցին գծով):

Այնքան անօրինութիւն կայ շրջանին մէջ, որ նոյնիսկ Վրաստանի մէջ օսէթներու ընկերակցութեան նախագահ Թենկիզ Կակիոյեւ կը կարծէ, որ իր դատին «անմիջական խնդիրները պէտք է երկրորդական դասուի շրջանին աւելի մեծ եւ կարեւոր խնդիրներու հետ:

«Նուրեթիանէք»  
17 Ապրիլ, 2002  
Ծար-ը՝ էջ 8

«ԱԶԳԱԿ»Ի  
ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ  
«ԱԶԳԱԿ»Ի հետ կապուելու համար հեռաձայնել  
հետեւեալ թիւերուն... 258526, 260115 եւ 241274:

www.homenetmentcentral.com

# ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

# ՀԱՅԵՐ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՄԷՋ՝ ՊԱՏԱՌԻԹԵԱՆ ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԷՆ

Այս օրերուն աշխարհի ամենէն հրատապ հարցն է պաղեստինեւիստայէլեան տազնապը, որ գրաւած է բոլորին ուշադրութիւնը: Իսրայէլ կը շարունակէ իր ոտնձգութիւնները արաբական աշխարհին դէմ՝ պաղեստինցի ժողովուրդին զլանալով տալ իր իրաւունքը: Բնականաբար, գոյութեան պայքար մղելէ բացի, պաղեստինցիին ոչինչ կը մնայ եւ, հետեւաբար, տազնապը կը բարդանայ, փոխանակ բարուք լուծումի մը յանգելու:

Պատմութեան հին ժամանակներէն ի վեր քաղաքական բարդ հարցերու թատերաբեմի եւ կոռուստիւտի վերածուած երկրամաս մը եղած է Պաղեստինը, ուր ապրած եւ իրենքայնորդ կերպով տիրապետութիւն հաստատած են իսրայէլացիք, փղշտացիք, ասորեստանցիք, բաբելացիք, պարսիկներ, Պողոտէականներ, Սելեւկեաններ, Հրեայ Հասոնեան տան քահանայ - իշխաններ, Տիրան Մեծ, Հերովդէսեան տունը, Հոռոմէացիք, Օմայեաններ, Աբասեաններ, սելճուքներ, Յաթիվականներ, խաչակիրներ եւ օսմանցիք: Առաջին Աշխարհամարտէն ետք բրիտանական հոգատարութիւն հաստատուեցաւ, իսկ 1948ին կազմուեցաւ Իսրայէլի պետութիւնը:

ղեստին. կ'ընդգրկէր Հրեայ տասը ցեղերը) եւ Յուդայի թագաւորութեան (հարաւը. կ'ընդգրկէր Յուդայի եւ Բենիամինի ցեղերը): Ն. Ք. 722-721ին Ասորեստանի Սարգոն Բ. թագաւորը նուաճեց Իսրայէլի թագաւորութիւնը, կործանեց Սամարիան եւ Հրեայ տասը ցեղերը բռնազաղթի մղեց Ասորեստան: Գաղթականները ժամանակի ընթացքին կորսնցուցին իրենց ինքնութիւնը եւ խառնուեցան այլ ժողովուրդներու. անոնց սերունդներէն կը նկատուին նեստորական ասորիները, աֆղանները, Եթովպիոյ ֆալաշները եւ այլն: Ներկայ Հրեաներէն շատ քիչեր իրենք զիրենք կորսուած տասը ցեղերու սերունդներ կը նկատեն:

Ն. Ք. 587-586ին Բաբելոնի Նաբոլէոնոստոր Բ. թագաւորը նուաճեց Յուդայի թագաւորութիւնը. Երուսաղէմ եւ Սողոմոնի տաճարը հրկիզուեցան, եւ բնակչութեան մեծ մասը գերեզմանուեցաւ Բաբելոն:

Պարսիկ Աքեմենեան Կիրոս Բ. արքան Ն. Ք. 539ին, Բաբելոնը նուաճելէն ետք զբաւեց Պաղեստինը. բռնազաղթուած մեծ թիւով Հրեաներ վերադարձան Բաբելոնէն եւ ձեռնարկեցին Երուսաղէմի տաճարի վերակառուցման: Նշենք, որ ներկայ Հրեաները մեծ մասամբ Բաբելոնեան գերութենէ վերադարձողներուն՝ Յուդայի եւ Բենիամինի ցեղերուն սերունդները կը նկատուին: Ոմանք ալ իրենք զիրենք Ղեւիի (Լեւի) սերունդէն կը նկատեն՝ հաստատելով իրենց կրօնական ծագումը, որովհետեւ Ղեւիի սերունդը կրօնական դասակարգը կը կազմէր. այս հիմամբ Լեւի ազգանունը բաւական տարածուած է:

Ալեքսանտր Մակեդոնացի Ն. Ք. 332ի զբաւեց Պաղեստինը, որ այնուհետեւ, 301ին մաս կազմեց Եգիպտոսի մէջ կեդրոնացած Պտղոմէական պետութեան: Ն. Ք. մօտաւորապէս 200ին Անտիոքոսի Եգիպտոսի վրայ յաղթական արշաւանքէն ետք Պաղեստին մաս կազմեց Սելեւկեան պետութեան:

Յուդայ Մակաբէի գլխավորութեամբ Հրեաներ Ն. Ք. 167ին ապստամբեցան Սելեւկեաններուն դէմ, իսկ 142ին հաստատուեցաւ Հասոնեան քահանայ - իշխաններուն գերիշխանութիւնը:

Տիրան Մեծ Ն. Ք. 70ական տարիներուն զբաւեց Պաղեստինը, իսկ 63ին Պոմպէոս Հռոմի հովաւորութիւնը հաստատեց հոն: Ն. Ք. 40ին Հերովդէս Հռոմի մէջ Յուդայի թագաւոր հռչակուեցաւ եւ 39ին վերադարձաւ Պաղեստին: Հերովդէսն իր օտարազորները իշխեցին մինչեւ Յ. Ք. 66, երբ Հրեաներ Հռոմը դէմ ապստամբեցան: 70ին, հնգամեայ պայաւորումէ ետք, Երուսաղէմ զբաւեցաւ եւ ավերուեցաւ: Ապստամբութիւնը շարունակուեցաւ մինչեւ 73, երբ ինկաւ դիմադրութեան վերջին ամրոցը՝ Մասատա: 132ին ծայր տուաւ երկրորդ ապստամբութիւնը՝ Պար Քոնիպայի գլխավորութեամբ, որ շարունակուեցաւ մինչեւ 135, եւ որուն զոհ գնաց կէս միլիոն մարդ եւ 985 զիւրը քանդուեցան: Հրեաներ ջիր ու ցան եղան. Յուդայաստանի մէջ Հրեայ չմնաց: միայն Գալիլիոյ մէջ մօտաւորապէս տասը հազար Հրեայ մնաց:

Պաղեստին 395ին բիզանդական նահանգի վերածուեցաւ եւ վարչական երեք շրջաններու բաժնուեցաւ:

### ՀԱՅԵՐ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՄԷՋ

Հայեր Պաղեստինի հետ յարաբերութիւն ունեցած են Ն. Ք. Ա. դարուն, Տիրան Մեծի տիրապետութեան ժամանակներէն, իսկ Սուրբ Վայրերուն մէջ ներկայութիւն եղած են քրիստոնէութեան առաջին դարերէն եւ Դ. դարէն հոն կառուցած են հայկական վանքեր, որոնց թիւը ժամանակի ընթացքին հասած է եօթնասուներ, եւ որոնց գլխավորը եղած է Երուսաղէմի պատրիարքութեան աթոռանիստ Ս. Յակոբայ վանքը (Երուսաղէմի հայկական միաբանական հին գաղթածախին կազմաւորման մասին անդրադարձած ենք «Ազգակ» թիւ 22 Յունիս 1999թ թիւով):

Դ. դարէն սկսեալ, քրիստոնեայ այլ ազգերու նման, հայեր եւս մեծ կարեւաններով ուխտագնացութիւններ սկսան կատարել Սուրբ Վայրեր: Աւանդութեան համաձայն, Գրիգոր Լուսաւորիչ եւս Երուսաղէմ ուխտի գացած է եւ Տիրոջ գերեզմանին վրայ երգած է «Լոյս Զուարթ»-ը: Աւանդութիւնը կ'ընէ նաեւ, որ ի յիշատակ անոր՝ ամէն կիրակնամուտքի «Լոյս Զուարթ»ը կ'երգուի հայ եկեղեցիներուն մէջ: Երուսաղէմ ուխտի գացած են նաեւ առաջին թագաւորներու սերունդէն վարդապետներ: Այս ժամանակներէն Երուսաղէմ դարձաւ հայ մշակույթի կարեւոր կեդրոն, ուր կեդրոնացան մատենագիրները:

Քաղկեդոնի 451ի ժողովէն ետք, քրիստոնեայ եկեղեցիներու միութիւնը հերձուեցաւ. հայ, ասորի, ղպտի, Եթովպիոյ եւ Մալաբարի եկեղեցիները հաւատարիմ մնացին Քրիստոսի մէջ մարդկային եւ աստուածային մէկ բնութեան բնորոշումին եւ ճանչցուեցան իրրեւ միաբան եկեղեցիներ, իսկ յոյն եւ լատին եկեղեցիները ընդունեցին Քրիստոսի մէջ մարդկային եւ աստուածային իրարմէ տարբեր յետասուտ բնորոշումը, որմէ ետք ճանչցուեցան

երկաբնակ կամ քաղկեդոնական եկեղեցիներ անուանով:

Դաւանական բուռն վեճերու պատճառով, յատկապէս Զ. դարու կէսերէն ետք, Երուսաղէմի հայ հոգեւորականները հալածանքներու ենթարկուեցան իշխող բիզանդական եկեղեցականներուն եւ իշխանութիւններուն կողմէ եւ մեծ զոհարարութիւններով Սուրբ Վայրերուն մէջ սկսան պահել հայ եկեղեցւոյ իրաւունքները: Այս ժամանակներէն նաեւ հայ առեւտրականներ բնակութիւն հաստատեցին Երուսաղէմի մէջ:

Պաղեստինի խաղաղ գոյակիցակը խանգարուեցաւ, երբ պարսից Խոսրով Բ. արքան 611ին ներխուժեց հոն, 614ին զբաւեց Երուսաղէմը, կործանեց եկեղեցիները եւ գերեզմանները Սուրբ Նազարէտը: Բիզանդիոսի Հերակլիոս կայսր 628ին վերագրաւեց Պաղեստինը եւ գերեզմանները Սուրբ Վայրերուն զգայն Երուսաղէմի մէջ:

### ՄՈՂԱՍՏԷՍ ՄԱՐԳԱՐԷԷՆ ԱՊԱՀՈՎԱԳԻՐ՝ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ ԱՐԲԱՎԱՄ ՊԱՏՐԻԱՐԷՆ

Արաբական թերակղզիին մէջ իսլամութեան ծնունդէն ետք, աւանդութեան համաձայն, Երուսաղէմէն աքսորուած Հրեաները դիմած են Մոհամմէտ մարգարէին, յորդորելով գայն ժառանգութեան իրաւունքով տրեւի Երուսաղէմի եւ հոն թագաւորել, որովհետեւ իրենք ալ Աբրահամի որդիներն են: Հրեաներ այս միջոցին դիմած են քրիստոնեաները հեռացնելու համար Սուրբ Երկրէն:

Աւանդութիւնը կը շարունակէ ըսել, որ Երուսաղէմի հայոց առաջին պատրիարքը՝ Աբրահամ անձնապէս մեկնած է Մեքքէ եւ ներկայանալով Մոհամմէտ մարգարէին՝ իր հպատակութիւնը յայտնած է անոր, անկէ խնդրելով ապահովութեան գիր մը՝ իրենց անձերուն եւ Սուրբ Վայրերու հայոց ստացուածքներուն պաշտպանութեան համար: Մոհամմէտ մեծ սիրով ընդունած է հայոց պատրիարքը եւ անոր փափաքին համաձայն իր ձեռքին դրօշը կրող ապահովագիր մը տուած է անոր. ապահովագիրին մէջ գրուած է (ըստ արաբ պատմագիր Զեքիէտիին):

«Ես Մոհամմէտ, որդի Ապտուլլայի, մարգարէ եւ առաքել աստուծոյ, Աբրահամ պատրիարքին եւ Երուսաղէմի ու Դամասկոս ու արաբիոյ միւս սահմանները գտնուող հայոց եպիսկոպոսներուն եւ վարդապետներուն եւ իրենց հետեւող ժողովուրդներուն, այսինքն եթովպեացիներուն, ղպտիներուն եւ ասորիներուն շնորհեցի բոլոր իրենց վանքերը, եկեղեցիները, ղպրոցները, կալուածներն ու արտքը: Ես Աստուծոյ առաքել վկայութեամբ Աստուծոյ, ինչպէս նաեւ մօտեղող բոլոր այր ու կին մարդոց խնդրելով վկայութեամբ խոստացաւ եւ տուի Երուսաղէմ գտնուող եկեղեցիները, Ս. Յարութեան տաճարը եւ Ս. Յակոբի մեծ եկեղեցին որ քաղաքի հարաւային կողմին դիմացն է եւ Սիոնի վանքին բով. տուի նաեւ Ձիթեցեաց վանքը եւ Քրիստոսի բանտին վանքը, Բեթլեհեմի եկեղեցին եւ Ս. Յովհաննէսի ու Սաբորիայի մատուռները, եւ Ս. Յարութեան տաճարի ետեւի աղօթարաններն ու ամբողջ Գողգոթան վերնաշարքով ու ներքնաշարքով: Եւ Քրիստոսի գերեզմանը, ուր լոյս կը վառեն, ու կրօնական միւս ուխտատեղիները, լեոները, ձորերը, կալուածներն ու ստացուածքները անցնող տուի Աստուծոյ առաքելին ու իսլամ բոլոր հաւատացեալներու վկայութեամբ»:

Իսկ Աբրահամ պատրիարքը եւ իրեն ընկերացող քառասուն անձեր հաւատարմագիր մը ղրկեցին, եւ հայերուն ու միաբան միւս քրիստոնեաներուն՝ եթովպիացիներուն, ղպտիներուն եւ ասորիներուն անունով ուխտեցին սահմանուած տուրքերը վճարել եւ բացի իսլամներու ամիրապետներէն ուրիշ իշխանաւոր չճանչնալ:

Մոհամմէտ մարգարէ այս հաւատարմագիրը հաստատելէն ետք իր յաղորդներուն վրայ ալ պարտք դրաւ հաստատուն պահել անոր բոլոր պայմանները: Օմար իպն իսթիմապ (ապագայ իսլամի) ինք եւս հաստատած է հաւատարմագիրը: Աբրահամ պատրիարքը փաստաթուղթը անելով վերադարձած է Երուսաղէմ:

ՊԱՂԵՍՏԻՆԻ ԱՐԲԱՎԱՄԻՆԷՆ ԵՏՔ  
Մոհամմէտ մարգարէի մահէն ետք (632),



Սամարացիներ իրենց սրբատեղի Նապլուսի մօտակայ Կերիզիմ լեռան բարձունքին: Անոնք հին հրեաներ են, որոնք Բաբելոնեան գերութեան չեն ենթարկուած եւ ճերկայիս քանի մը հարիւր հոգի կը հաշուեն:

### ՊԱՂԵՍՏԻՆ՝ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԻՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Պաղեստին աշխարհի ամենէն հին բնակւած երկրներէն է: Քանանացիներ հոն թափանցած են Ն. Ք. երեք հազարամեակ առաջ. Ն. Ք. մօտաւորապէս երկու հազարամեակ առաջ (կարգ մը տուեալներու համաձայն՝ 1760ական տարիներուն) Նոյի առաջին գաւկիին՝ Սեմի սերունդէն Թարայի գաւակը՝ Աբրահամ, որուն անանարոյժ ընտանիքը հարաւային Միջագետքէն, սուժերական Ուր քաղաքի շրջանէն գաղթած էր Վերին Միջագետքը՝ Նարան, իր փոքրիկ տոհմին հետ (որ քանի մը տասնեակ անձ կը հաշուէր) Նարանէն գաղթեց Քանանի երկիրը եւ ուխտ կնքեց Աստուծոյ հետ: Աբրահամի եւ Սառայի գաւկիին՝ Իսահակի սերունդներն են Հրեաները կամ երրայեցիները, իսկ Աբրահամի եւ Հագարի գաւկիին՝ Իսմայիլի սերունդներն են արաբները:

Իսահակի եւ Իսեքբայի գաւակը՝ Յակոբ Աստուծոյ կողմէ Իսրայէլ անունը ստացաւ: Յակոբի եւ անոր առաջին կնոջ՝ Լիայի գաւակներն են՝ Իուդաէն, Սիմէոն, Ղեւի, Յուդա, Իսաքար եւ Զաբուլոն, որոնցմէ (բացի Ղեւիէն, որ մէջ կրօնաւորներու դատակարգը կազմուեցաւ) առանձին ցեղեր կազմուեցան: Լիայի աղային Չեքփայէն ծնան Գաղ եւ Ասեր (Աշեր): Երկու ցեղեր՝ Տան եւ Նեփթալիմ ծագում առին Յակոբէն եւ անոր երկրորդ կնոջ՝ Լեայի աղային Բաղայէն: Լեայի ծնաւ Յովսէփն ու Բենիամինը. Բենիամին առանձին ցեղ կազմեց, մինչ Յովսէփի գաւակները՝ Մանասէ եւ Եփրեմ առանձին ցեղեր կազմեցին:

Քանանի երկրին մէջ ծայր տուած սովի մը պատճառով Հրեաներ Եգիպտոս գաղթեցին: Ն. Ք. ԺԳ. դարուն Ղեւիի (Լեւի) տունէն Մովսէսի առաջնորդութեամբ վեց հարիւր հազար Հրեաները Եգիպտոսէն ելան. Կարմիր ծովու ափերը անցնելէն ետք, Սինայ լեռան վրայ Մովսէս ստացաւ Աստուծոյ պատուիրանները եւ



Երուսաղէմ. Դամասկոսի դուռը

հաստատեց միաստուածեան Եհովայի պաշտամունքը: Հրեաներ պատրաստ ըլլալով Աստուծոյ շնորհին, քառասուն տարի անապատները թափառեցան: Մովսէս հաւատարիմ մնալով Եհովայի պատուիրաններուն՝ չանցան Յորդանան գետը եւ մահացաւ Նեպո լեռան վրայ, հոնկէ դիտելով Աւետեաց երկիրը: Իր յաջորդը՝ Յեսու ժողովուրդը առաջնորդեց Աւետեաց երկիր, գոր Աստուած խոստացած էր տալ Հրեաներուն՝ իրրեւ ժառանգութիւն:

Ն. Ք. ԺԲ. դարուն Եգիպտանի աւազանէն Պաղեստինի ծովափնեայ շրջաններ գաղթեցին փղշտացիները. անոնք հետագային հելլենիստական մշակույթին ենթարկուեցան, իսկ յետոյ արաբացան՝ կազմելով պաղեստինցի ժողովուրդին կորիզը:

Ն. Ք. մօտաւորապէս 1020ին Հրեաներ Սաւուրի գլխավորութեամբ հիմնեցին Իսրայէլ - Յուդայի թագաւորութիւնը. անոր գահակալներէն նշանաւոր դարձան Դաւիթ եւ գաւակը՝ Սողոմոն իմաստուն: Իսրայէլ - Յուդայի թագաւորութիւնը Ն. Ք. 928ին բաժնուեցաւ Իսրայէլի թագաւորութեան (հիւսիսային Պա-

Ապու Պաքըր իսլամի սրբազան պատերազմի ձեռնարկեց եւ երեք հազար կռուողներով (որոնց թիւը յետոյ բարձրացաւ 7500ի) շարժեցաւ դէպի Սուրիա եւ Պաղեստինի սահմանները, բայց մահը վրայ հասաւ (634ին): Անոր յաջորդը՝ Օմար իսլամ Մեռեալ ծովուն հարաւը գտնուող Ուատի Արապայի ճակատամարտին նուաճեց բիզանդական գործերը եւ քանց Կապադիոքիոսը, յորդորելով 30 Յուլիս 634ի Աթ-Նատային (հարաւային Պաղեստին) ճակատամարտին բիզանդական զօրքը ջախջախուեցաւ. Պաղեստինի դուռները այլեւս բացուած էին արաբական զօրքերուն դիմաց:

Հերակլիոս կայսր 638ին նոր բանակ ղրկեց իսլամներուն դէմ. Յորդանան գետի արեւելեան ափին, 20 Օգոստոս 638ի Եարմուէկ ճակատամարտին իսլամներ մեծ յաղթանակ տարին եւ մտան Պաղեստին: Սակայն Երուսաղէմ եւ Կեսարիա շարունակեցին դիմադրութիւնը: Երուսաղէմ ինկաւ 638ին, Կեսարիա՝ 640ին: Ամբողջ Պաղեստին եւ Սուրիա այսպէսով նուաճուեցան արաբներուն կողմէ: Օմար իսլամ Պաղեստինը երկու նահանգի բաժնեց. Յորդանան եւ Պաղեստին, որուն մայրաքաղաքը ընտրուեցաւ Լիտա (հետագային՝ 716ին մայրաքաղաքը Իրմէն փոխադրուեցաւ):

Օմար իսլամ յունաց Սաֆորոնէս պատրիարքէն ստանձնեց Երուսաղէմը եւ անձնապէս երաշխեք տուաւ բոլոր քրիստոնեաներու ապահովութեան համար:



Այսպէսով, արաբական տիրապետութեան հաստատումէն ետք նոր գոյակիցակ հաստատուեցաւ. Դամասկոսի մէջ կեդրոնացած Օմայեաններու իսլամիսլամութիւնը առանձին ուշադրութիւն կեդրոնացուց Պաղեստինի վրայ, ձեռնարկելով անոր արաբացման եւ իսլամացման: Թէեւ իշխանութիւնը քրիստոնեայ համայնքներուն նկատմամբ հանդուրժողութիւն ցուցաբերեց, բայց կարգադրեց որ Երուսաղէմի հայ, յոյն եւ այլ քրիստոնեայ, ինչպէս նաեւ Հրեայ համայնքները առանձին - առանձին ապրին քաղաքին տարբեր թաղամասերուն մէջ:

Երուսաղէմի պարիսպներէն ներս այսպէսով չորս թաղամասեր կազմաւորուեցան. Իսլամական թաղ (ուր թաղապետը Մալքե իպն Մարուան իսլամի կողմէ Սողոմոնի տաճարի վայրին վրայ 691ին կառուցուեցաւ Քուպպաթ Սախրա մզկիթը, իսկ անոր գաւկին՝ Ուալիտա իսլամի կողմէ կառուցուեցաւ Աբսա մզկիթը), Քրիստոնեաներու թաղ (Ս. Յարութեան տաճարին եւ Ս. Շիրիմի շուրջ, ուր կեդրոնացան յոյն եւ քրիստոնեայ միւս համայնքները), Հրեաներու թաղ (Լացի Պատին շուրջ), իսկ քաղաքին հարաւ - արեւմուտքը, Սիոն լեռան բարձունքին գտնուող Ս. Յակոբայ վանքին շրջապարզ կազմաւորուեցաւ իրրեւ Հայկական թաղ: Սիոն թաղամասին մէջ արդէն հայ աշխարհիկ համայնքը վերիվայրումներու չենթարկուեցաւ եւ որոշ ժամանակ մը ետք միայն աշխուժացաւ:

Յաջորդող տարիներուն յոյներէն ոմանք իրենք զիրենք անապահով գաղով եւ իշխանութեան ղրկեցրը կորսնցուցած ըլլալով հեռացան Երուսաղէմէն եւ Պաղեստինի այլ շրջաններէն: Նոյն ժամանակ փոքրաթիւ Հրեաներ, հինգ հարիւր տարուան բացակայութենէ ետք վերադարձան Երուսաղէմ: Սակայն եկեղեցական համայնքի կողքին ապրու հայ աշխարհիկ համայնքը վերիվայրումներու չենթարկուեցաւ եւ որոշ ժամանակ մը ետք միայն աշխուժացաւ:



# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր -



ՓՈՆԿ ՓՈՆԿ

## ԱՅՍՕՐ՝ Հ. Մ. Ը. Մ. - ԱՆԴՐԱՆԻԿ

Լիբանանի փրկելու փորձերի խմբային ախտիանությունների մրցումներում, այսօր՝ Չորեքշաբթի, «Միշտ Մըր»-ի անունը համալիրին մէջ (Նահր էլ Մոթ) տեղի կ'ունենայ Հ. Մ. Ը. Մ. ի տղոց եւ Անդրանիկի տղոց միջև մրցումը: Անիկա սկզբունքով տեղի պիտի ունենար երէկ, սակայն Սաթէս - Ռիատի պատերազմի մրցումին պատճառով յետաձգուեցաւ այսօրուան:

## ԼԵՎԱՍԻ ՇԱԲԱԹԱՎԵՐՁԻ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Շաբաթավերջին, Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Բուլղարիա գաղտնի վրայ տեղի կ'ունենան Հ.Մ.Ը.Մ.ի ԼԵՎԱՍԻ պատերազմի մրցումները: Անցեալ շաբաթավերջին կ'լիմայական աննպաստ պատճառներով անոնք տեղի չէին ունեցած:

Ստորեւ՝ մրցումներուն յայտագիրը:

ՇԱԲԱԹ, 27 ԱՊՐԻԼ	ԺԱՄ
Թորոսեան - Լ. եւ Ս. Յակոբեան (միջակ տղաք) 3:00ից	
Լ. եւ Ս. Յակոբեան - Դպրեվանք (մեծ տղաք) 4:00ից	
Ճեմարան - Շամլեան - Թաթիկեան (մեծ աղջիկներ) 5:00ից	
Ս. Հոփսիմեան - Շամլեան - Թաթիկեան (մեծ տղաք) 6:00ից	
ԿԻՐԱԿԻ, 28 ԱՊՐԻԼ	
Ս. Քառասնից Մանկանց - Ս. եւ Լ. Յակոբեան (միջակ տղաք) 12:00ից	
Ս. Խանամիրեան - Յառաջ (միջակ տղաք) 1:00ից	
Յառաջ - Մեարպեան (մեծ աղջիկներ) 2:00ից	
Ս. Հոփսիմեան - Ս. Խանամիրեան (միջակ աղջիկներ) 3:00ից	
Մեարպեան - Շամլեան - Թաթիկեան (մեծ տղաք) 4:00ից	
Ս. Հոփսիմեան - Ճեմարան (մեծ տղաք) 5:00ից	
Կ. Բ. Վ. - Դպրեվանք (մեծ տղաք) 6:00ից	
Լ. եւ Ս. Յակոբեան - Քաղաքի Հայ Աւետ. Բոլեան (մեծ տղաք) 7:00ից	

## Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ...

Շարունակուած 3րդ Էջէն



Ան իր խօսքը եզրափակեց հաստատելով նոր սերունդներուն մէջ յարատեւ պայքարի համուզումը՝ անպայման վերատիրանալու պայքանական հողերուն եւ ստանալու հայ նահատակներուն թափած արեան արդար հատուցումը, կերտելով ամբողջական եւ միացեալ Հայաստան: Ոգեկոչման արարողութիւնը փակուեցաւ «Յառաջ Նահատակ» քայլերով:

**PHOTO RAFFI**  
Լուսանկարչական արագ, ապահով եւ մատչելի սպասարկութիւն բոլոր առիթներու համար

❖ DIGITAL ԵԿԱՐԱՇԱՆՈՒՄ ԵՒ ՎԻՏՏՕ - ԵՐԻՉ  
❖ ԲԱՐՁՐՈՐԱԿ ԵԿԱՐԱՇԱՆՈՒՄՆԵՐ

Միակ հասցէ. - Պուրճ Համուտ, Լ. եւ Ս. Յակոբեան քաղ, 49/161: Հեռ. 03 / 703181  
E-mail: photoraffi@hotmail.com

**ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱՄԻՐԱՅ  
ԷԳՂԱՅՐԱՎՅՈՒԹԻՒՆ**

**ՀՐԱԻԵՐ**

Պիտի պատգամ՝  
Ամերիկայի հոգեւորականները պարգևատրեցին  
**ՃԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ**

● ժամը 4:00ից պատգամ ընդհանուրին  
● ժամը 5:30ից գրոյց ընդհանուրին

Տեղի կ'ունենայ Կիրակի, 28 Ապրիլ 2002, կէսօրը ետք, Հայ Առաքելական Եկեղեցաւորաց Եղբայրակցութեան աղօթատեղիին մէջ:

## «ՉԷՄՓԻՐՆԶ ԼԻԿ»

### ՌԵԱԼ ՄԱՏՐԻՏ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՆԵՅ ՊԱՐՍԵԼՈՆԱՆ՝ 2-0, ԱՆՈՐ ԻՍԿ ԴԱՇԵՆ ԿՐԱՅ

«Չէմփիրնչ Լիկ»-ի կ'իւսարտական հանգրուանի երթի գաւաթի ճակատումին, երէկ գիշեր Ռեալ Մատրիտ ոչ միայն շատ կարեւոր յաղթանակ մը արձանագրեց, այլեւ մեծ իրագործում մը կատարեց, որովհետեւ անիկա «Նուքամփ»-ի մէջ իր վերջին յաղթանակը արձանագրած էր... 19 տարի առաջ:

Պարսելոնա, որ երթի այս մրցումը կը հիւրընկալէր իր դաշտին վրայ, չկրցաւ այդ առաւելութենէն օգտուիլ եւ իր կրած այս պարտութենէն ետք բաւական մեծ տոկոսով կորսնցուցաւ արտական մրցումին հասնելու իր յուշերը: Դարձին, ան դժուար առաքելութիւն մը ունի, տրուած ըլլալով որ ճակատումը տեղի պիտի ունենայ «Մանթիսկո Պեդրոնի»-ի մէջ:

98 հազար համակիրներու ներկայութեան, Ռեալ Մատրիտի կուլերը նշանակեցին ֆրանսացի Չինետին Չիտան (55րդ) եւ բրիտանացի Մթիլ Մաքսանաման (92րդ): Անգլիացին, որ դաշտ ներկայացած էր 80րդ վայրկեանին, փոխարինելով Կուրթին, սրանչէլի յոյսով մը պարտութեան մատնեց բերդապահ Ռոպերթո Պոնտան:

## ԼԵՄՊՐԹ՝ ՍԿՈՎՏԻՅՈՅ ԼԱԻԱԳՈՅՆ ՖՈՒԹՊՈՒՍԸ

Սելթիքի միջնապահ Փոլ Էմպլըք երէկ ընտրուեցաւ Սկոտլանդի 2002 տարուան լաւագոյն ֆուտպոլիստը, երկրին թղթակիցներուն կողմէ, յայտնեց Սկոտլանդի ֆուտպոլի ֆետերասիոնը:

Էմպլըքը, որ հինգ տարի առաջ Պորտսմութի Տորթմուտի հետ շահած էր «Չէմփիրնչ Լիկ»-ի բաժակը, այս եղանակին մեծապէս նպաստեց իր ակումբին, որ յաջողաբար երկրորդ տարին ըլլալով շահի Սկոտլանդի ախոյեանութիւնը, ինչպէս նաեւ իր ակումբին հետ հասնի Սկոտլանդի ֆուտպոլի բաժակի մրցաշարքին աւարտականին:

Շատ հաւանաբար, սակայն, ան յառաջիկայ ամիս Ռեյնսըրքի դէմ տեղի ունենալիք աւարտական մրցումին չկարենայ իր մասնակցութիւնը բերել, որովհետեւ անցեալ Կիրակի օր Ռեյնսըրքի դէմ ախոյեանութեան մրցումին ընթացքին վիրաւորուեցաւ:

Վերջերս, Սկոտլանդի ֆուտպոլի ազգային խումբին նոր մարզիչ Պերթի Ֆոլքս փորձեց համոզել 32 տարեկան միջնապահը, որ վերադառնայ միջազգային ասպարէզ, տեսնելէ ետք անոր ունեցած լաւ խաղարկութիւնը:

Էմպլըքի ետին 2րդ դիրքը գրաւեց իտալացի յետապահ Լորենցո Անտրուս (Ռեյնսըրք), որ գերապահեց իր ետին գտնուող Սելթիքի երկու մարզիկները՝ Հենրիք Լարսընը եւ Եոհան Միալպին:

## ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՉԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ՊԱՏՐԱՍՏ՝ ՄՈՆՏԻԱԼԻՆ

Միացեալ Նահանգներ հանդիսացաւ առաջին երկիրը, որ յայտարարեց 2002ի Մոնտիալին իր մասնակցութիւնը բերող 23 մարզիկներուն անունները:

Ճափոնի եւ Հարաւային Բորնէյի մէջ տեղի ունենալիք Մոնտիալին, Միացեալ Նահանգներու մարզիչ Պրուս Արեանայի 23 մարզիկներէն եօթը յարգաբար երրորդ Մոնտիալին ըլլալով մաս կը կազմեն ազգային խումբին: Անոնց 12ը հաստատուած են Ամերիկայի մէջ, մինչ 11ը մաս կը կազմեն եւրոպական ակումբներու:

Նախորդ երկու Մոնտիալիններուն իրենց մասնակցութիւնը բերած մարզիկներն են. բերդապահներ՝ Պրէտ Ֆրիտըլ, Քէյթի Քիլըր, Թոնի Մէնոլա, միջնապահներ՝ Բոպի Ճոնզ, Բրուս Ելման, Իոնի Սթիւարթ եւ յառաջիկայ ջապահ Ճոն Մուր: Նշենք սակայն, թէ Քիլըր եւ Մէնոլա 1990ի Մոնտիալին ալ ներկայ էին:

Հակառակ անոր որ Միացեալ Նահանգներու մէջ ֆուտպոլը դանդաղօրէն կը յառաջանի եւ ժողովրդականութիւն կը սկսի չահել, սակայն անիկա այն եօթը երկիրներէն մէկն է, որ յարգաբար չորրորդ Մոնտիալին ըլլալով ներկայ է:

Արեան, որ 1998ի Մոնտիալին ետք ստանձնեց իր պաշտօնը, երբեքու կէս տարուան այդ ժամանակամիջոցին ընթացքին ազգային խումբը կազմելու համար փորձեց 73 մարզիկ:

Անդրադառնալով 1998ի Մոնտիալին արձանագրած ճախող արդիւնքներուն, ան ըսաւ, որ ոչ մէկ պատճառ կայ այդ մէջը յիշելու, որովհետեւ այլեւս անիկա կը պատկանի անցեալին:

Աւելիով պատրաստուելու համար մրցումներուն, Միացեալ Նահանգներու ֆուտպոլի ազգային խումբը յառաջիկայ Մայիս 1ին, մարզական բանակում մը պիտի կատարէ Քէյթի մէջ (Հիւսիսային Քարոլայնա): Ապա խումբը ֆուտպոլի բարեկամական մրցումներ պիտի կատարէ յաջորդաբար՝ Ուրուկուէյի (Մայիս 12), Ժամայայի (Մայիս 16) եւ Հոլանտայի դէմ (Մայիս 19), նախքան Հարաւային Բորնէյ մեկնելը (Մայիս 24ին):

Միացեալ Նահանգներ, որ պիտի հաստատուին Մէյնի մէջ, մաս կը կազմէ Դ. Խմբակին: Անոր Ա. հանգրուանի առաջին մրցակիցը պիտի ըլլայ Փորթուգալ (Յունիս 5), երկրորդը, Հիւրընկալ երկիրը՝ Հարաւային Բորնէյ (Յունիս 10), իսկ վերջապէս երրորդը՝ Լեհաստան (Յունիս 14):

## ՊԱՏԵԹՊՈՒ

### ՍԱԺԵՍ ԱՐԺԱՆԱՅԱԲ ՆԱԵԻ ԲԱԺԱԿԱԿԻՐԻ ՏԻՏՂՈՍԻՆ

Լիբանանի տղոց պատերազմի բաժակի մրցաշարքի աւարտականին, երէկ, Լիբանանի ախոյեան Սաթէս, յաջողեցաւ տուալէ մը իրագործել, երբ «Միշտ Մըր»-ի անունը համալիրին մէջ (Նահր էլ Մոթ) իր կատարած մրցումին պարտութեան մատնեց Ռիատին՝ 96 - 82 արդիւնքով:

## ԱՆԱ ԱՎԼԻ ԱԼԷՅ ԵՆԹԱՐԿՈՒԵՅԱԻ ԾԱՆՐ ՊԱՏԻԺՆԵՐՈՒ

Լիբանանի ֆուտպոլի ֆետերասիոնը, շաբաթականի իր գումարած ժողովին վաւերացրելէ ետք 22րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները, տուալ շատ մը որոշումներ, որոնցմէ ամէնէն ծանրը ստացաւ Ախա Ալի Ալէյ:

Առաջին շաբթի, անոր մարզիչը՝ Ալլուպ Օտի-20 մէկ տարիով կախակալուեցաւ՝ իրաւարարին հայիոյած ըլլալուն համար: Նոյն պատճառով կախակալուեցաւ անոր մէկ մարզիկը՝ Ալի Աուստա, որ մէկ ամիս պիտի բացակայի դաշտերէն: Խումբը երկու միլիոն լիբանանեան ոսկի տուգանքի ենթարկուեցաւ իր համակիրներուն պատճառով, որոնք օրուան իրաւարարին հասցէին ուղղած էին ոչ մարզավայել խօսքեր: Խումբին մարզիկներէն՝ ժիլպերթ Տոս Սանթոս երկու մրցումով կախակալուեցաւ իր կատարած մէկ կոշտ խաղին պատճառով:

Պատժուող ակումբներուն կարգին էր նաեւ Նրժմէ, որ իր համակիրներուն պատճառով երեք միլիոն լիբանանեան ոսկի տուգանք մը ստացաւ:

Տարալ մարզիկներ, որոնք իրենց երրորդ դէղին քարտը ստացան, մէկական մրցումով կախակալուեցան: Այդ մարզիկներն են՝ Պիլալ Համուտ, Ֆատրլ Սայլետ, Ռամի Աթուէ (Պրժժ), Սարգիս Ապաճեան (Նրժմէ), Քամրայ Քալուն (Թատամն Սուր), Ռամի Քֆուրի, Մարսիլի Սիլվա (Ախա Ալէյ), Հիշամ Շըլէյի (Սաֆա), Հասանէն Տապալու եւ Լուիս Ֆետնանտէյ (Շապալ Սահէլ):

Հակառակ անոր որ 22րդ հանգրուանի մրցումներուն նշանակուեցաւ միայն 12 կողմ, սակայն դեղին քարտ ստացողներուն թիւը բաւական մեծ էր՝ 30 մարզիկ: Անոնք են. Մուսաֆա Ֆաքիի, Ֆետի Պապիպի (Ալի Սայլետ), Հասանէն Տապալու, Լուիս Ֆետնանտէյ (Շապալ Սահէլ), Հիշամ Շըլէյի, Ամէտ Նամանի (Սաֆա), Գուրգիս Ենգիպարեան, Քամրայ Քալուն, Հայտար Նամ (Թատամն Սուր), Հասան Հրժմէ, Սարգիս Ապաճեան, Եսիհա Հաշմ (Նրժմէ), Ժիհադ Քընասան, Պիլալ Համուտ, Ֆատրլ Սայլետ, Ռամի Աթուէ, Ուիլսոն Չիսո (Պրժժ), Ռապի Ապու Շահիա, Հրէյն Սալիլ, Կարպետ Գրիգորեան (< Մ. Մ.), Սարգիս Տոսպետեան, Լեւոն Խաչատուրեան, Ներսէս Պերպերեան (< Մ. Ը. Մ.), Եուսէֆ Պարաքար, Բոստիս (Սայլետ), Փոլ Ռոքսոմ, Ուիլսոն Շահուտէ (Սաժէ), Ռամի Քըֆուրի, Չաէր Շըլէյալ եւ Մարսիլի Սիլվա (Ախա Ալէյ):

Ֆետերասիոնին որոշումով կարգ մը փոփոխութիւններու ենթարկուեցան այս շաբաթավերջին տեղի ունենալիք 23րդ հանգրուանի մրցումները, ինչպէս նաեւ այսօր տեղի ունենալիք Լիբանանի ֆուտպոլի բաժակի մրցաշարքին քառորդ աւարտականի մրցումներուն յայտագիրը:

Ստորեւ՝ փոփոխութեան ենթարկուած յայտագիրը.

(23րդ հանգրուան)

ՇԱԲԱԹ, 27 ԱՊՐԻԼ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Շապալ Սահէլ - Ռապիլ 4:30ից	Մ. Աւան	
Հ. Մ. Ը. Մ. - Ախա Ալէյ 4:30ից	Պ. Համուտ	
Ահտ - Հ. Մ. Մ. 4:45ից	Պ. Ելլուպ	

ԿԻՐԱԿԻ, 28 ԱՊՐԻԼ

Սաֆա - Նրժմէ 4:30ից	Մ. Աւան
Թատամն Սուր - Սաթէս 4:30ից	Թրիփոյի
Ալի Սայլետ - Սայլմ 4:30ից	Պ. Ելլուպ
Պրժժ - Անսար 4:30ից	Պ. Համուտ

● ՍՏՈՐԵԻ՝ այսօր տեղի ունենալիք Լիբանանի ֆուտպոլի բաժակի մրցաշարքին քառորդ աւարտականի մրցումներուն յայտագիրը.

ԺԱՄ	ԴԱՇՏ
Հ. Մ. Մ. - Ժաուատ Թրիփոյի 3:30ից	Ժուլիս
Ախա Ալէյ - Ահտ 3:30ից	Պ. Համուտ
Պրժժ - Թատամն Սուր 4:30ից	Պ. Ելլուպ
Նրժմէ - Անսար 8:45ից	Մ. Աւան

ՈՒՏԱՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ - ՇՐՋԱՊՏՈՅՆԵՐ

● 5-6 Մայիս Սար ճրիս, Թարթուս-Լաթաքիա, Գաթաք 24 31 Մայիս 475\$

